Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

УИГ

Дирфицский ревизиро

Янв. 1906 г.

0-24.

343.8
Մ-34

01 MAR 2010

ՄԱՐ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԲԱՆՏԵՐԸ

(Համառօտ ակնարկներ)

Հրատ.
„Դրօշակի“

1906
ԺԸՆԵՎ

343.8
Մ-34

LIBRAIRIE ORIENTALE
H. SAMUELIAN
51, RUE MONSIEUR-LE-PRINCE
PARIS VIe — DAN. 88-65

343.8
Մ-34

150 Բ

ՄԱՐ

ԹԻՒՐՔԱԿԱՆ ԲԱՆՏԵՐԸ

(Համառօտ ակնարկներ)

Արտատպած „Դրօշակից“

13215

Հրատ.
„Դրօշակի“

1906
ԺԷՆԵՎ.

25 JUN 2013

37.091

29480-Կ.2

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Մ. Ա. Մասնիկյան
ԱՆՎԱՆ

(12506-58)

1106-2002

ԿԵՆԴԱՆԻ ԹԱՂԻԱԾՆԵՐԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ

I

Երկիր-բռնատունը. Օրէնք—նիզամ. Ոնիրներ օրէնքի անունով. Դրամազուրկ յանցաւորները. Դէպի բանտերը. Ընդհանուր ակնարկ. Թիւրք բանտերի կազմը. Կալանաւորների կենցաղը. Կալանաւոր վաճխառուներ. Եասըղ-օյունու. Էտուտ. Բարոյական դժոխք:

—

Այն երկիրը, որ հռչակած է բռնակալական եղակի հալածանքներով, ուր մարդու միտքը քարացած է իր վրայ գործ դնող բռնութիւնների հանդէպ, ուր խաղաղ, նստակեաց տարրի գոյքը, պատիւն ու անձը ոտնահարւում է անպատիժ կերպով ամեն մի քայլում, ուր՝ մի խօսքով՝ կատարւում են աշխարհիս և ոչ մի անկիւնում չը տեսնւած ու չը լսւած ոճիրներ, այնտեղ—այդ դըժբախտ երկրում, դժւար չէ պատկերացնել, թէ ի՞նչ անկման և ի՞նչ ստորացման ենթարկւած պիտի լինի բանտարկեալը, որ օրէնքով զրկւած է ամեն տեսակ իրաւունքից և ենթակայ այս կամ այն պաշտօնեայի ու ոստիկանի քմահաճոյքին կամ նրա բերանից արտասանւած նիզամին:

Նիզամ—ահա այն մոգական խօսքը, որ ոչ մի երկրում այնչափ չէ արտաւորւած և այնքան չէ շահագործւած, ինչպէս Թիւրքիայում: Մի բառ, որ աջ և ձախ կրկնում է ամեն ոք, յետին զափթիէից սկսած մինչև սուլթանը՝ այդ անօրէն երկրում: Միայն աւազակները են, որ առանց „նիզամ“ բառը գործ դնելու, ցցւում են ամեն տեղ իրենց թշւառ զոհերի դէմ՝ նրանց ջանը կամ մալը առնելու: Նիզամի անունով են խօսում և՛ վէրկի մէմուրը և՛ թահսիլատարը, որոնք սահմանւածի փոխարէն ուզածի չափ են տուրք վերցնում: Նիզամի անունով են խօսում և ըէժիի զօլջին և գէօմրիւկչին, որոնք ծխախոտ ու այլ արգելւած ապրանքներ փնտրելու պատրւակով՝ թալանում են ճանապարհորդին. նիզամի անունով են խօսում և զափթիէն և հաժիդէական քաղաքներում ու գիւ-

զերում, „զՀՖԷ փարասի“ ստանալիս, որպէսզի արգելք չը լինին շուկայի սովորական գործերը կարգադրելու. Նիզամի անունով են խօսում և ԻՒԶԲԱՇԻՆ և ԲԻՆԲԱՇԻՆ՝ մէջիդիէները ճրնկալիս՝ ոճրագործին անմեղ յայտարարելու խնդրում. Նիզամի անունով են խօսում և ՓՕԼԻՍՆ ու ԿՕՄԻՍԷՐԸ, և ՄՈՒՍՏԱՆԴԻԿՆ ու ՔԱԹԻՊԸ և ՄՈՒԱՎԻՆՆ ու ՖԱՀՔԷՄԷՐԷԶԸ՝ դրամի գնով վկաների ցուցմունքները բարեփոխելու ու մարգասպանին, գողին, աւազակին անպարտ արձակելու համար. Նիզամի անունով են խօսում և ՓԱՇԱՆԵՐԸ—լինին դրանք գայմագամ, միւթէսարիֆ թէ վալի, երբ կարմիր ոսկիների քանակից շլացած՝ „բուլբուլթու“ են տալիս այս ու այն բէյին կամ ղադէին՝ ամբողջ գիւղեր ու աւաններ շրջելու միւլթէզիմ անուն տակ և չաբաշ աշխատաւորի արդիւնաբերութիւնը հալալ եղբօր պէս կէս անելու, շատ անգամ նրա պատուի, նրա կնոջ վերաբերմամբ օրթագ ներկայանալու և այդ քէյֆի ու զէվկի մէջ իր հովանաւոր փաշայի կենացը կոնծելու. Նիզամի անունով է խօսում, վերջապէս, և ԵՐԼԳԲԳԻ բռնաւորը, որ իր մանկաւիկների ու հարճերի սիրոյ համար՝ պալատի բակերում ու պարտէզներում ամիսներով սպասող այս ու այն թէմէնաՀՋինների մի-մի „ֆէրմանը շահանէ“ տալով՝ ուղարկում է երկրի զանազան կողմերը, վալիի բարձրագոյն պաշտօնով՝ որպէս նիզամի ներկայացուցիչներ...

Նոյն այդ նիզամն է, որով զինուած յիշեալ բոլոր պաշտօնեաները, իրենց անպարտ արձակած ոճրագործների փոխարէն, ժողովում են „այլ և այլ“ յանցանքներով մեղադրուած անպաշտպան անՀատներին, որոնցից եթէ մէկին իր ոճիրի, անպատճառ մի քանիսին էլ դրամ չ'ունենալու յանցանքով դատապարտելով՝ ուղարկում են ներս, դէպի մութը, անօրոշը, դէպի բանտ՝ քաւել տալու նրանց դրամ չ'ունենալու մեղքը:

Եւ գալիս են անվերջ բոբիկ, տկլոր, սոված, կեղտի մէջ կորած այդ մոռացածները՝ ոստիկանների հսկողութեամբ, և շղթաների ծանրութեան տակ ջախջախուած՝ ներս նետուում: Դրսի համատարած „ազատ բանտից“ գալիս են իսկական բանտը, մեծ բռնատնից պոկուած՝ երկաթէ նեղ դռնով անցնում են դէպի փոքր բռնա-

տունը—ո՞վ գիտէ, ո՞րչափ ժամանակով: Դրսի պատկերը կամաց-կամաց ազօտանում, նսեմանում, մի երազ, մի վազանց անուրջ է դառնում, իսկ իրականութիւնը չորս պատերի մէջ պարփակուած մի փոքրիկ տարածութիւն՝ լի մարդկային ժխորով—իր դաժան, ձանձրալի հալ ու մաշով:

Թիւրքիայի բոլոր քաղաքներում, համարեա առանց բացառութեան, բանտերը գտնուում են կառավարական հիմնարկութեան (սէրայ) տակը և կամ նրա բակի մէջ: Այդ տարօրինակ երևոյթը աչքի է ընկնում ամեն մի օտարականի, որ սովորել է տեսնել բանտը քաղաքի մի այլ մասում՝ հեռու դատարանից կամ կառավարական հիմնարկութիւնից: Դա յիշեցնում է բանտի նախնական դրութիւնը, երբ իշխանաւորը գիտմամբ իր բնակարանի տակ՝ խոր որջերում էր պահում յանցապարտներին, նրանց գլուխների վրայ բազմած՝ իր շռայլ նիստ ու կացով, իր շէայտ կեանքով ամեն րոպէ զգացնել տալու իր մեծութիւնն ու հզօրութիւնը...

Եւ իշխանաւորի սառած սիրտը, որ գադարել է մարդկային լինելուց, գիտում է բնութեան գեղեցկութիւնը իր պալատից նոյնպիսի անտարբերութեամբ, որպէս և իր ոտքերի տակ կեղտի ու թշուառութեան գիրկը նետուած մարդկային հոծ բազմութեան վիթխարի տանջանքը: Եւ որքան այդ թշուառութիւնը ահռելի է ու ազազակող, այնչափ էլ նա մեծ է զգում իրեն. չէ՞ որ այդ բոլորի կեանքի ու մահու տէրն է ինքը, որ ստեղծուած է միմիայն իշխելու և հրամայելու համար:

Ճիշտ նոյն ձևով այսօր Թիւրքիայում բանտերը այնպէս են տեղաւորուած, որ բանտարկեալները միշտ էլ կարող են տեսնել բոլոր պաշտօնեաներին սէրայ մտնելիս: Ահա անցնում է դատարանի նախագահը, նա որ վճիռ է տուել՝ այդ դժբախտներին միևնոյն տեղը տարիներով բևեռելու: Նզովքի ու անէծքի մի հառաչ է թռչում բանտի մութ խորշից նրա հասցէին, շատ անգամ այնչափ լսելի ու շեշտուած կերպով, որ ինքը-նախագահն ևս հասկանում է: Բայց արդեօք խղճահարո՞ւմ է նա: Ոչ: Ընդհակառակը նա հրճուում է մտածելով թէ որպի՜սի պատիժներ տալ գիտէ... Եւ այդ բոլորը նա համարում է արդիւնք իր արժանիքի, իր բարձրութեան, իր զօրութեան...

Սէրայի տակ գտնուող բանտերը շատ աւելի վատ պայմանների մէջ են, քան միւսները։ Այնտեղ արև չէ թափանցում, խոնաւ են և գարշահոտ, և իբրև հին շինութիւններ, ներկայացնում են պատերը հաստ և ընդհանրապէս գետնափոր մութ սենեակներ, որոնց մէջ փոշին ու կեղտը տարիներով են մնացած. լուսամուտները փոքրիկ, տձև, կիսախաւար։ Ներս մտնելիս մարդ երևակայում է թէ կատակոմբներ է այցելում։ Միւսները, որոնք սէրայի բակումն են, իբրև աւելի նոր շինութիւններ, համեմատաբար տանելի են. նրանք ներկայացնում են կամ քառանկիւնի բակ, որի շուրջը շարուած են սենեակներ, դռները դէպի բակը, և կամ թէ սենեակները բակի մէջ տեղը միմեանց կպած, որոնց դռները բացւում են շրջապատող բակի մէջ։

Կան և մի քանի բանտեր, որոնց դրսավայրերը մաքուր օդ չեն տեսնում. դրանք մեծ կօրիդօրներ են, որոնց մէջ բացւում են սենեակների դռները, այնպէս որ սենեակների և կօրիդօրի օդը համարեա միապաղաղ ապականութիւն է։ Բարեբախտաբար այդ ձևի բանտեր թւով քիչ են,—նրանք գտնւում են վիլայէթների կենտրոնական քաղաքներում։

Բանտերի շինութեան ներքին պատկերը լրացնելու համար՝ պէտք է աւելացնել նրանց կից կամ տակը գնդան կոչուած գետնափոր, կեղտոտ ու խոնաւ հորերը ու խուցերը։ Դրանք բանտերի բանտերն են՝ յանցաւոր բանտարկեալներին պատժելու համար։ Վերջին տարիները՝ քաղաքական բանտարկեալներին սկզբնական քննութիւնների ժամանակ խոստովանեցնելու գործում՝ ինկվիզիցիական չարչարանքների գաղտնարաններն են դրանք։

Իւրաքանչիւր քաղաքում՝ բանտին կից գտնւում է նաև „կաֆաս“ կոչուած մի արգելարան՝ տուրքերը չը վճարողների համար։ Դրանք շինուած են գերաններից, շատ անգամ առանց ծածկի։ Այնտեղ են լցնում մարդ, կին, պատանի խառը, որոնք միմեանց վրայ թափուած սպասում են առաւօտից մինչև երեկոյ, երբ փաշան դուրս կը գայ սէրայից՝ և նրանց ազմուկ ու աղաչանքի վրայ՝ իրաւունք կը տայ տուն երթալու։ Նրանք միւս առաւօտ պարտաւոր են բերել տուրքը, հակառակ պարագային նորից կը ժողովեն և կը լցնեն այնտեղ։ Սէրայի բակը

մտնողի վրայ դա ցնցող տպաւորութիւն է թողնում. մարդ սոսկում է՝ տեսնելով, թէ ինչպէս այդ հոծ բազմութիւնը, մի մի զանգւած դարձած, գերանների արանքներից թևերն ու ոտքերը դուրս պարզած, գերաններից կախ ընկած, ամառը՝ արևի ճառագայթներին և ձմեռը՝ անտանելի ցրտին է ենթակայ։ Գոնէ նստելու տեղ գտնէին խեղճերը...

Քաղաքներում եղած բանտերից դուրս՝ Թիւրքիայում կան նաև ղալա (բերդ) կոչուած բանտերը, որոնք ծառայում են՝ „վճարեկ ատեանից հաստատուած“ 5 տարուց աւելի դատապարտուածների համար՝ իբրև աքսորավայր։ Դրանք բոլորն էլ հին բերդեր են, թւով ութ,—Ակքա, Տրիպոլիս Սիւրիական, Տրիպոլիս Աֆրիկեան, Սինոպ, Ռոդոս, Ֆէզան, Փայաս և Բոդրում։ Վերջին երեքը ամենախիստ աքսորավայրերն են և որ գլխաւորն է՝ բոլորովին ամայի տեղերում լինելով՝ այնտեղ եղած աքսորականները հէնց բերդի պարիսպների մէջ էլ անց են կացնում իրենց օրերը, և դրա համար էլ այնտեղ օրէնքով պիտի աքսորեն միմիայն այնպիսի յանցաւորներ, որոնք դատապարտուած են թիապարտութեան (քիւրէկ ջէզասի)։ Իսկ միւս հինգը գտնւում են պարսպապատ քաղաքներում և այն դիւրութիւնն ունին, որ այնտեղ եղած բանտարկեալներից բերդարգելութեան դատապարտուածները (զալաբէնդ) կարող են օրէնքի համաձայն բանտից դուրս գալ և մնալ յիշեալ քաղաքներում՝ պարիսպներից դուրս չը գալու պայմանով ու պարապել ուզած արհեստով։ Քաղաքի պարիսպի դռներում պահապաններ կան, որոնք հսկում են անց ու դարձ անողներին և ճանաչում են այնտեղ եղած աքսորականներին, թող որ իւրաքանչիւր մէկ աքսորական իբր նշան ոտքին կրում է մի օղ։ Եթէ մէկն ու մէկը փորձէ փախչել, այս անգամ արդէն բանտը կը ձգեն և իբրև պատիժ այնտեղից դուրս գալ չեն թողնի։ Բայց ինչպէս ամեն մի օրէնք, նոյնպէս և այս՝ Թիւրքիայում կաշառքի մի մեծ աղբիւր է պաշտօնեաների համար. շատ անգամ թիապարտը բանտից դուրս՝ քաղաքումն է շրջում, իսկ բերդարգելը՝ ներսն է—բանտում։ Այդ անկարգութեան դէմ ուղղած բողոքները միշտ անհետևանք են մնում...

Առողջապահական պայմանների տեսակէտից՝ Թիւրքաց բանտերը քննադատութիւնից ստոր են։ Ամեն մի

սենեակ լցնում են այնչափ մարդ, որչափ կարելի է սրահ-մել, բառիս բուն նշանակութեամբ. 4×5 քառակուսի արշին տարածութիւն ունեցող սենեակում տեղաւորում են 10—12 մարդ, 7×8 քառ. արշին սենեակում՝ 28—35 և այլն։ Սենեակներում քանի մարդ տեղաւորելու գործում ոչ մի օրէնք, ոչ մի սահման չը կայ։ Եւ հէնց դրա համար էլ՝ բերուած օրինակները միշտ ենթարկուում են փոփոխութեան. եթէ մի օրում դրսից գան 30 բանտարկեալ, դրանք ուզեն չ'ուզեն, պիտի տեղաւորուին եղած սենեակներում։ Չը նայելով սենեակների լեփ լեցուն լինելուն, դրանց էս ներս կը խոթեն՝ թէկուզ մինչև առաւօտ նստած մնան. դրա մասին մտածող չը կայ։ Երբ դժգոհութիւն են յայտնում, պաշտօնեաները պատասխանում են. „բախտաւոր էք, որ հիմայ էք ընկել մեր ձանկը. կոտորածի ժամանակ լինէր, նստել էլ չէիք կարողանալ“։

Հասկանալի է, թէ այդպիսի խեղդոցի մէջ ինչ չափեր կ'առնեն զանազան միջատներ՝ ոջիլ լու, փայտոջիլ. վերջինները սարսափելի են թիւրք բանտերում. պատերը ծեփուած են դրանցով։ Նոր բանտարկեալը մի քանի օր չի կարող քնել, մինչև որ քնի պահանջը հիւանդութեան է փոխուում և նորեկը ուշաթափի պէս քնում է։ Անգիտակցաբար քորելուց ձեռք-ոտք արիւնոտուում են, վէրքեր բացուում և ապա վերածուում բորոտութեան։ Միմեանց հետ այդչափ խիտ նստելը, քնելը և միևնոյն ամանում մի քանիսի միասին ձեռքերով կերակուր ուտելը առիթ է դառնում և ս ի ֆ ի լ ի ս հիւանդութեան խիստ չափեր առնելուն. թիւրք ամբոխը վարակման մասին ոչ մի գաղափար չ'ունի։ Կառավարութիւնն էլ դրա դէմ ոչ մի միջոց չէ գործ դնում։ Բաղնիքը, տաք ջրով լացիլը գոյութիւն չունի թիւրք բանտերում։

„Կոհկարասիքը“, որի վրայ պիտի նստեն բանտարկեալները, կազմում են երբեմն միայն ս ս ի ր ն ե ր, որոնք շատ անգամ խոնաւութիւնից փտած լինելով՝ գարշահոտութիւն են տարածում իրենց շուրջը։ Դրանց վրայ ամեն մի բանտարկեալ փռում է իր սեփական կապերտը, չուլ ու փալասը, աբան, մի խօսքով՝ ով ինչ կարող է։ Նոյնը և անկողնի վերաբերմամբ. ամեն մարդ ազատ է՝ բերել տալ տնից ինչ տեսակ անկողին ուզում է։ Ան-

կողնազուրկները, լոկ խսիրի վրայ պառկողները անհամեմատ շատ են թիւով։

Այդպիսի խեղդիչ սենեակներում ապրելը անկարելի կը լինէր, եթէ ցերեկը նրանց դռները չը բացէին։ Սանջակների և վիլայէթների կենտրոնական քաղաքներում բանտի դռները առաւօտ վաղ բացուում են և փակուում արևը մայր մտնելիս։ Այդ օրէնքը չի տարածուում կաղաների և նահիէների բանտերի վրայ, ուր օրական երկու անգամ միայն—առաւօտեան և երեկոյեան դէմ—դռները մի մի ժամ բացուում են։

Բակը մտնելիս, երբ բոլոր բանտարկեալները դուրսն են՝ մարդու առաջ պատկերանում է մի անսովոր տեսարան.—խառնիճաղանճ մի բազմութիւն, որ յիշեցնում է ոչ թէ բանտ, այլ որևէ շուկայի յետ ընկած մի անկիւնկամ քարվանսարայ՝ լի ամեն տեսակի մարդկային արարածներով։ Տարբերութիւն եթէ կայ, այդ էլ հագուստի վերին ծայր քրքրուած ու մաշուած վիճակն է, ապացոյց ծայրահեղ աղքատութեան։ Կարծես թշուառութիւնը իր առասպելական ճնշումով թագաւորում է այդ չորս պատերի մէջ։ Սակայն այդ չի ազդում մարդկանց վրայ. նրանց տրամադրութիւնը շատ սովորական է։ Մի տեղ մի քանիսը անց ու դարձ են անում, մի այլ անկիւնում մէկը ժողոված գլխին մարդկային մի ժխոր՝ հէքեաթ է պատմում մի ուրիշ տեղ դարդոտի մէկը իր տամբուրան է կրծքին քաշել և ոգևորուած երգելով՝ թրթռացնում նրա լարերը, մի այլ տեղ ոմանք ձեռք ձեռքի տուած „Հալայ“ պարն են պարում, չորրորդ տեղում՝ սրձեփն է թէյ, սուրճ պատրաստում և սրախօսութիւններով գովաբանում իր ապրանքը, մի ուրիշ խումբ ինչ որ խաղի է բռնուած, շատախօսի մէկն էլ մի քանի մաշուած շապիկ ու վարտիկ ձգած ուսին „խառաջ, հա խառաջ“ է գոռում՝ դրւագելով իր իրերի դիմացկանութիւնը. նա միջնորդ դ է լ լ է լ ն է, որ խաղերի մէջ տանուլ տուած բանտարկեալների հագուստներն է ծախում՝ պարտքը թափելու համար։ Մի արևակողմում, եթէ ձմեռն է, կամ ստուերում, եթէ ամառն է, շարքով տկլոր մարդիկ են նստած ու քթիւ են անում։ Այս ու այն դռան հանդէպ մէկը մանգալի վրայ դրած կերակուրին է նայում ու յաճախ սրան նրան բօթում մի կողմ, որ չը դիպչեն մանգալին

ու շուռ տան։ Այդ ժխորի մէջ մերթ այս դռանը, մերթ այն՝ մի ծեր, կուզ, աչքերը ճպռտա ոստիկան է երևում, սրան նրան փաղաքշական խօսքեր ասում՝ ծխախոտ կամ մի „ֆինջան“ սուրճ ստանալու համար...

Ծայրահեղ աղքատութեան դրօշմը կրող այդ բազմութեան մէջ երբեմն երբեմն նկատւում են քիչ շատ մաքուր հագնւած մարդիկ. դրանք այս և՛ այն ցեղերի պետերն են, որոնք ներս են նետւած բանտը՝ նրանցից դրամ քաշելու համար և կամ թէ այնպիսի անձնաւորութիւններ են, որոնց հակառակորդները աւելի են կաշառք տւել և դրանով կարողացել դրանց դատապարտել տալ։

Բանտարկեալները ստանում են կառավարութիւնից թային—օրական 300 դիրէմ հաց (1 կիլօ) և ուրիշ ոչինչ։ Ջրի համար պէտք եղած կարասներն ու թասերն անգամ բանտարկեալների հաշւով են առնում։ Այնուհետև ամեն մարդ ազատ է ուզածն ուտել և հագնել։ Համազգեստ չը կայ։ Քիչ շատ ունևորները խմում են թէյ և սուրճ, կերակուր են շինում, նարգիլէ և ծխախոտ ծխում. իսկ աղքատը ազատ է սովամահ լինելու։ Դրանցից շատերը ստիպւած են իրենց հացի կէսը ծախել 7—10 փարայի (հինգ փարան մի կոպէկ) և դրանով մածուն, խաղող, դօշաբ, պանիր, ժաժիկ առնում և օրը անցկացնում։ Ծախողների հացը առնում են պաշտօնեաներն և ոստիկանները։ Երբեմն գալիս են շրջակայքի աղքատ բնակիչները՝ նոյնպէս հաց գնելու նպատակով։ Այդ դէպքում հացի գինը բարձրանում է. դրա համար էլ պաշտօնեաները արգելում են ծախել դրսի մարդկանց, որով և թայինի գինը ընկնում է։ Դրանից օգտւում են իրենք պաշտօնեաները և ամբողջ թայինը շատ անգամ 10 փարայով գնում։

Բանտի ներքին կեանքի վրայ համարեա հսկող չը կայ. ինչ ուզում են, թող անեն, ինչով ուզում են, թող պարապեն. այդ իրենց գործն է, բաւական է որ փախչող չը լինի։ Ամեն մարդ իր համար պնակներ է բերում, տախտակով պատերի վրայ դարակներ շինում. պարաններ, որչափ ուզէք, դա բանտային սովորական կարգերին հակառակ բան չէ համարւում։ Դեռ սա ոչինչ. դաղտնի կերպով ներս են բերում դանակներ, գործիքներ, հաստ փայտեր, որոնք ծառայում են կռիւների դէպքում իբրև

զէնք։ Բանտային խուզարկութիւնների դէպքում շատ անգամ խէնջալներ ու ատրճանակներ են գտնում։ Բոլորը ժողովելուց յետոյ չի անցնում մի քանի օր, նորից բանտը լցւում է այդ իրերով...

Աղքատ բանտարկեալները սովատանջ չը լինելու համար ստիպւած են աշխատել. գործում են գուլպաներ, դրամի ու ծխախոտի քսակներ, գլխի արախչիներ և այլն։ Իսկ բերդերում՝ տախտակէ արկղներ, ծխախոտի տուփեր, նալիներ՝ բանուածներով և սաղաֆներով զարդարած։ Շինած իրերը ուղարկում են շուկայ ու ծախում։ Աշխատաւորի վաստակը լինում է օրը մօտ 20 փարայ։ Դա արդէն բաւական է համարւում թշւառի կեանքը քաշ տալու համար։ Ամենից „չաղ“ պարապմունքը աղքատ բանտարկեալի համար՝ որևէ սենեակում ծառայի պաշտօն ունենալն է։ Նրա վարձը ամեն մի օր մէկի հաշւին ապրելն է. իր թայինը ծախում է, որի դրամը իր վաստակն է։

Բացի ծառայից, իւրաքանչիւր սենեակ ունի իր չաւուշը—պետը, նոյնպէս բանտարկեալ։ Դրանք սովորաբար բանտի մէջ աչքի ընկնող, ուժեղ ու քիչ թէ շատ խելացի մարդիկն են։ Նրանցից շատերը իրենց իրաւունքը ի չարն են գործ դնում. եղած ծախքերին չեն մասնակցում և ընդհակառակը նորեկ բանտարկեալներից որոշ տուրք են առնում՝ չաւուշլիգ անունով. շատ չաւուշներ ծառային պահում են պաշտօնի մէջ նրա վաստակի մի մասը ստանալու պայմանով։ Շատ անգամ էլ աւելորդ անկողիններ են պահում և նորեկներին վարձով տալիս. նրանք են հսկում սենեակի մաքրութեան և անցած ու դարձածի վրայ և միևնոյն ժամանակ պատասխանատու են պաշտօնէութեան առաջ՝ սենեակում պատահած կռիւների համար։

Վաշխառութիւն էլ գոյութիւն ունի թիւրքական բանտերում։ Տեղացի բանտարկեալները, որոնք կերակուր են ստանում իրենց տներից, իրենց թայինները ծախում են վաշխառուին՝ ամսով։ Եթէ թայինը արժէ 20 փարայ, (կէս զուրուշ) նա առնում է ամսականը 10 զուրուշով։ Վաշխառուն դրամ է տալիս չունևորին տոկոսով, որ վերջինս թել առնէ և գործէ։ Ամսական՝ մի մէջիդիէի համար՝ ստանում է 3 դահեկան, որ ասել է թէ՝ 7 ամսում իր դրամի կրկինն է ստանում։ Եթէ ժամանակին

պարտատերը չէ կարողանում վճարել, վաշխառուն նրա թայինն է խլում, մինչև որ պարտքերը թափի։ Այդպիսի դեպքերում երբեմն գանգատներ են լինում, խնդիրը հասնում է փաշային, բանտի տնօրէնը բացատրութեան է կանչւում, բայց որովհետև նա որոշ տոկոս է ստանում վաշխառուից, ուստի և նրան պաշտպանում է։ Եթէ պարտատերը ոչինչ չունի ուտելու, տնօրէնը կարգադրում է օրական կէս թային միայն տալ նրան—իսկ կէսը պարտատիրոջ, մինչև որ պարտքը հանգչի։ Մի քանի տեղ տոկոսով դրամ տալը այնքան սովորական բան է դառնում, որ նոյնիսկ քաղաքի չբաւոր մարդիկ գալիս են բանտարկեալ վաշխառուներից դրամ վերցնելու՝ բերելով իբրև գրաւական՝ հագուստներ, զարդեր և նոյնիսկ անկողին։ Չը կարծւի թէ վաշխառուն բանտ մտնելիս դրամի տէր է եղել։ Դէպքեր են եղել, որ ճարպիկ մի գիւղացի սկզբում ծառայութիւն անելով՝ և ապա իր վաստակը տոկոսի տալով՝ տասն տարուց յետոյ, բացի իր ապրուստը հոգալուց, որ համեմատած չբաւորների հետ շատ փառաւոր է եղել, տուն վերադառնալիս 50 ոսկի դրամ է տարել հետը։ Իսկ դա մեծ գումար է Թիւրքիայի խուլ անկիւններում։

Բանտարկեալների ժամանցի մէջ մեծ տեղ են բռնում խաղերը և յատկապէս „եաստրդ օյունու“։ Դա սենեակի խաղ է։ Մէկը իր բարձը շպրտում է դիմացը, երկրորդը նրան պատասխանում է, ապա երրորդը, և այսպէս բոլորը. մի վայրկեանի մէջ բարձերը այս ու այն կողմ են թռչում. բուրդը, բամբակը, լաթի կտորները, խոտն ու դարմանը, որոնցով լցուած են բարձերը՝ ծանր փոշու հետ լցնում են սենեակը։ Ապա սկսում է սոսկալի իրարանցում... Մէկի ոտքն է շուռ եկել, միւսի աչքը ցաւել, երրորդի գլուխը պատին դիպել. աղմուկն ու հարայ հրոցը, հայհոյանքն ու վայնասունը միանում են այդ խաղի անբաժան ընկեր տուր ու դմբոցին։ Այդ միջոցին միւս սենեակներում գտնւող ծանօթներն ու ընկերները սկսում են գոռալ, դռներին զարկել ու սպառնալիքներ ուղարկել հակառակորդին։ Դրա դէմ բողոքում է իր սենեակից մէկը, որ հակառակորդ է նրան և ահա նոյն կռիւը փոխադրւում է երկրորդ սենեակը։ Աղմուկը ընդհանուր է դառնում։ Կարծէք այդ վայրկենին բանտը մի գազան է, որ մռնչում է անողոք ցաւից և անիծում կեանքն ու

աշխարհը։ Երբ կռիւը լուրջ կերպարանք է առնում, երբ մի քանին արդէն վիրաւորւած են, այդ ժամանակ է միայն վարչութիւնը միջամտում և վերջ տալիս կատաղի իրարանցումին...

Սովորաբար բանտերում լինում է կռի տրամադիր մի տարր. քաջութիւն, ի գ ի թ ո ւ թ ի ւ ն վաստակելու տենչը մեծ տեղ է բռնում այդ գործում։ „Իմ երկրացուն հայհոյեցին“ կամ “իմ սենեակի մարդուն անարգեցին“, ասում է մէկը և առաջ նետւում։ Դա արդէն կռի հրաւէր է։ Բայց դրանք ոչինչ են համեմատած այն կռիւների հետ, որոնք ծագում են „տղայի“ խնդրից։ Դա արդէն ուրիշ բան է. այդտեղ խօսում է ամբողջ Թիւրքը աշխարհի ստոր բնազդը, գազանային կիրքը։ Եւ որովհետև բանտերում միշտ էլ կան 14—16 տարեկան տղաներ, հէնց դրանց առթիւ էլ տեղի է ունենում այդ գազանային պայքարը։ „Խալիլը զբօսնեց նրա հետ և ոչ ես“, նախանձում է մէկը այնպիսի մի կատաղութեամբ, որ դժւար է նկարագրել։ Սկսւում է մի կեղտոտ ինտրիգ. իւրաքանչիւրը իր պաշտպաններն ու բարեկամներն ունի։ Մի փոքրիկ առիթ և ահա երկու կողմը զինւած ամեն տեսակ իրերով—փայտերով, դանակներով, կերակուրի ամաններով, նալիներով՝ միմեանց վրայ են յարձակւում։ Բակը ծածկւում է արիւնով. մի քանի վիրաւորներ այս ու այն կողմ, երբեմն իսկ անշնչացած դիակներ։ Այդ միջոցին ոստիկաններ, զինւորներ, պաշտօնեաներ լցւում են բակը. բոլոր բանտարկեալները փախչում են սենեակները և դռները փակում։ Դեմի շարունակութիւնը տեղի է ունենում այդ ժամանակ. պակասը պաշտօնեաներն են լրացնում։ Մի քանի պարագլուխների էլ շղթայում ու նետում են զ ն դ ա ն ը, և նոր դատ սկսում այն մարդկանց դէմ, որոնք արդէն 101 տարւայ են դատապարտւած...

Այդ անարգ զգացումի հետ է կապւած և մի տարօրինակ երևոյթ, որ մեծ հաճոյք է պատճառում որոշ տեսակի բանտարկեալներին։ Վաշխառուները գրաւ վերցրած կանացի հագուստները հագցնում են գեղեցիկ պատանիներին և պար ածել տալիս։ Նւագի ու երգի, նարգիլէի ու յաճախ օղիի, մանաւանդ „Էսրարի“ ազդեցութեան տակ Մահմեդի երևակայած “ջէննէթը“ այդ վայրկենին հանդէս է գալիս և ժամերով զբաղեցնում մեղի ու ըմբացած ամբոխին...

Աղօթելն ևս մեծ տեղ է բռնում բանտերում։ Դա տեղի է ունենում մեծ ճշմարտութեամբ ոչ այնքան մի պարտք կատարելու, որչափ ճշմարիտ իսլամ երևալու համար։ Ամեն տեսակ կեղտ դրա տակ ծածկւում է. այդ պատճառով էլ ամենախստատակ մարդիկ աղօթքի նկատմամբ խստապահանջ են և ծայրահեղ կրօնական։

Նկատելի մի իրողութիւն։ Շատ թիւրք բանտարկեալներ ազատուելուց յետոյ մի քանի օր չ'անցած՝ կրկին վերադառնում են բանտ։ Նրանց ասելով՝ ժամանակը աւելի լաւ է անցնում այդտեղ, քան դուրսը։ Երբ մէկը դատապարտւում է 3 տարուայ բանտարկութեան, ժպտալով ասում է. „մի տարի մի կողքիս վրայ կը պառկեմ, մի տարի՝ միւս, մի տարի էլ մէջքիս վրայ և ահա երեք տարին անցաւ“։

Թիւրքական բանտը այսպիսով ներկայանում է մի հիմնարկութիւն, որ ֆիզիքապէս և բարոյապէս ոչ միայն փչացնում է բանտարկեալներին, այլ և նրանց միջոցով իր ազդեցութիւններն ու ախտերն է տարածում աւելի հեռուն—երկրի այլ և այլ անկիւնները—այդ աշխարհի դժոխային պատկերը կատարեալ անելու համար։

II

Բաղաքական բանտարկեալներ. 1882-ի ձերբակալութիւնները Էրզրումում. Բանտարկեալները մեծ կոտորածների միջոցին. Բանտային տերրոր. Խմբական սպանութիւններ. Թունաւորումն. Իսֆիալչիներ. Խուզարկութիւն. բռնի խոստովանիք. Զինիվիզ. Դազուխ.

—

Հայկական շարժման օրերից սկսած՝ թիւրքական բանտարկեալների թւում հայ քաղաքական կալանաւորները կազմում են պատկառելի տոկոս։ Դրանք տեղաւորւում են խառն, ամեն կարգի ոճրագործների, յանցաւորների ու սրիկաների հետ միասին, միևնոյն բանտերի մէջ և հետևաբար ստիպւած են ենթարկւելու նոյն անտանելի դժոխային պայմաններին, որոնց նկարագրութեան նւիրւած էր առաջին մասը։

Թիւրքահայը, իբրև քաղաքական յանցաւոր, բանտերի մէջ երևաց 70-ականի վերջերին Էրզրում, հէնց ռուս զինւորների այնտեղից դուրս գալուց անմիջապէս յետոյ, երբ մի քանի երիտասարդներ մտածեցին մի ընկերութիւն կազմել և զինւել՝ թիւրքերի յարձակումների

դէմ պաշտպանւելու համար։ Թիւրքերն ատամներ էին կրճտացնում հայերի դէմ՝ այն ժպտուն և ուրախ տրամադրութեան պատճառով, որ նրանք ցոյց տւին ռուս զօրքին Էրզրում մտնելու օրերին։ Վրէժ առնելու առիթներ էին որոնում։ Կասկածը գնալով մեծացաւ կառավարական շրջաններում, մինչև որ 1882 թւականի դեկտեմբերի առիթով մօտ 400 քաղաքական յանցաւորներով լցւեց Էրզրումի բանտը։

Սակայն զնդանը, որից երբեմն այնքան վախենում էր հայը, սկսեց արհամարհւել։ Հէնց առաջին քայլում հայ յեղափոխականը վալի-փաշային տւած պատասխանով բնորոշեց իր պատրաստականութիւնը՝ կեանքի գնով պաշտպանելու իր կորցրած իրաւունքը, ընտանիքի պատիւը—ազատութեան նախանշանները։

„Երեք տարի շարունակ մեզ կեղեքում են Շէյխ Իբրահիմը իր հրոսակներով, չէրքէզները, մուհաջիր միւսիլմանները, որոնց խրախուսում էք դուք, վալի փաշաներդ և ձեր ստորագիր պաշտօնեաները։ Հայ չը մնաց, որ չը կեղեքւի, հայուհի չը մնաց, որ չ'անպատւի, տուն չը մնաց, որ չը թալանւի։ Ամբողջ գիւղեր քարուքանդ եղան, հարիւրաւոր անմեղ ընտանիքներ կորան և այդ բոլորը դուք գիտէք, փաշա էֆէնդի։ Դուք գիտէք, որովհետև ձեր հրամաններով է, որ կատարւած են բոլոր աւերումները։ Ահա հէնց այդ պատճառով մենք ընկերութիւն կազմեցինք, որ կարողանանք մեր պատիւը և ինչքը պաշտպանել ու դէմ դնել այդ չարագործութիւններին։“

Հայ յեղափոխականի հաւատամքն էր այդ, որ այդչափ պարզօրէն գնւում էր պաշտօնական Թիւրքիայի առջև 400 բանտարկեալների կողմից՝ նրանց առաջնորդ ու ղեկավար Կէրէկցեանի, Վէմեան զինագործ քահանայի և Ալէքսանի բերանով։ Դա ըմբոստութեան և կռւի առաջին նշանն էր, որ տրւում էր դարևոր ստրուկի կողմից դարևոր բռնապետութեան։ Եւ միաժամանակ դա սկիզբն էր բանտարկութիւնների այն հսկայական շարքի, որ գընալով աւելի ու աւելի մեծ չափեր առաւ, մինչև որ հասաւ 95 թւականի հայկական մեծ ողբերգը, իր ահռելի բանտարկութիւններով։

Սարսափելի է այդ շրջանի հայ բանտարկեալների կեանքը։ Նրանք երանի էին տալիս փողոցներում ու տները մէջ խողխողուած իրենց եղբայրներին ու քոյրերին, որ մի քանի ժամուայ չարչարանքից յետոյ՝ մեռան, „հանգստացան“. մինչդեռ իրենց չարչարանքն ու տանջանքը ոչ վերջ ունէր և ոչ վախճան։ Ինկվիզիցիական հոչակաւոր տանջանքները նսեմանում են այդ վիթխարի ցաւի, թիւրք բռնապետութեան ուղեղի ծնունդ՝ այդ անորակելի սարսափի հանդէպ։

Կոտորածի ահեղ շրջանն էր։

Գնդակներից խոյս տուող, մեծ մասամբ հարուստ և դիրքով հայերը, որոնք լցուել էին այս կամ այն քաղաքի սէրայի բակը՝ պաշտպանութիւն գտնելու յուսով, բոլորն էլ նեռուեցին բանտերը և ապա դրանց մէջ եղած քիչ շատ ազդեցիկ ու կառավարութեանը „խային“ ճանաչուածները հէնց սէրայի բակում էլ զինուորների ձեռքով հրացանի բռնեցին։ Կարելի՞ է երևակայել աւելի սարսափելի բան, քան այն, որ ահագին բազմութեան մէջ ամեն մէկը սրատարսի սպասում է իր հերթին, երբ երկաթէ դուռը ահագին շռինդով բացուում է և զինուորները կարմրած աչքերով՝ եաթաղանները ձեռքերին ներս են մտնում և ջոկում անպաշտպան հայերին... Քանի՜-քանի՜ ինքնասպանութեան դէպքեր, որքա՜ն խելագարուածներ բանտի սև պատերի մէջ։ Այդ ոչ ոք գիտէ։

Բայց ահա համատարած կոտորածի հետ վերջացաւ և բանտային կարմիր տերրորը։ Սկսուեց երկրորդ շրջանը։ Հերթը եկաւ յեղափոխականներին։ Ո՞վ պատճառ եղաւ այդ ջարդին ու կոտորածին,—ի խ տ ի լ ա լ ջ ի ն ե ր ը։

Առաջին գործողութիւնը խուզարկութիւնն է։

Խուզարկութեան գործին, բացի ոստիկանութիւնն ու ժանդարմական ծառայողները, մասնակցում են ոչ միայն մուավինը, մուստանտիկը, բէյէդիէ բէիզը, թազի մխտարը, այլ և զինուորները և թիւրք ազաներն ու բէյերը։ Ամեն մի հաւատացեալ թիւրք կամաւոր լրտես է և ոստիկանի պաշտօն է կատարում. լուրեր է բերում կառավարութեան, թէ այս ինչի մօտ զէնք է տեսել, թէ այն ինչը արգելած թղթեր ունի։ Եւ մի պարզ մատնութիւն ու լուր բաւական է, որպէսզի խզոյն խուզարկի „կասկածի“ ենթարկուած տունը։ Զինուորները ա-

մեն կողմից շրջապատում են՝ հրացանները պատրաստի բռնած, որ եթէ մէկն ու մէկը փորձէ փախչել, հրացանագարկ անեն։ Տան մէջ կանանց և երեխաների լացն ու շիւանը աշխարհ է բռնում։ Փնտրում են տան տղամարդին, որ արդէն կոտորածին զոհ է գնացել, բայց այդ բանին ոչ ոք չէ ուզում հաւատալ... Տղամարդ չը գտնելով, տան տիկնոջն են հարցաքննում, նրա պատասխանից գոհ չեն, երեխաներին են քննում, ապա դրացիներին, և եթէ պատահմամբ նրանց տուած ցուցմունքները հակասում են միմեանց, խզոյն ամբողջ տունը տակն ու վրայ են անում։ Ոստիկանները ոտի տակ են տալիս ամեն ինչ, փչացնում, պիտանի իրերը գողանում, գարդերն ու գրամը յափշտակում։ Եւ այդ ամբողջ ժամանակ մեծ պաշտօնեաները միջոց չունեն գանգատներ լսելու կատարուող անկարգութիւնների դէմ,—նրանք հարցաքննութեամբ են զբաղուած։ Ամեն մի կտոր թուղթ, մի անմեղ գիրք, ինչ ուզում է լինի, փտանգաւոր է և կասկածի առիթ. դրանք բոլորը ծրարւում են և կնքւում։ Որքան շատ գիրք տեսնեն, այնքան աւելի փտանգաւոր մարդու հետ գործ ունին. Յեղափոխականից աւելի գիրքն է թշնամի... „Եթէ տանտէրը չը կայ և մեռած է, ուրեմն իր արժանի վարձը ստացել է—մտածում են պաշտօնեաները—իսկ եթէ նա կենդանի է և խոյս է տալիս, դատարկ չը պիտի յետ դառնալ“։ Նրա մեծ որդին կայ, եղբայրը կայ, բարեկամը կայ, մէկին վերցնում են նրա փոխարէն, մինչև որ ինքը ներկայանայ... Զեռքն անցած տղամարդին ամուր կապկապում են և զինուորների հսկողութեամբ ուղարկում դէպի կենդանի թաղածների աշխարհը։ Այդ տեսարանը անծանօթ չէ թիւրքահային... „Եասագ, եասագ“, գոռում են զինուորները։ „Դին դիւշմէնի“, գոռում է ամբոխը և առաջ վազում՝ ձեռքերով բզկտելու կապանաւորին։ Զինուորների խումբը պատռում է ամբոխի շարքերը և առաջնորդում կապանաւորին դէպի սէրայ... Եւ ահա բերւում են դրանք, ծեր, երիտասարդ, աղքատ ու հարուստ և դիզւում իրար վրայ բանտի խուցերում։

Հալածանքի այդ անսովոր միջոցին բանտերի դռները փակ էին և երբէք չէին բացուում։ Աղբը, կեղտն ու մարդիկ իրար էին խառնուած։ Ոչ որ բողոքել չէր համարձակւում, ձայն հանողը պատիժ էր մինչև մահ-

Պետական գրադարան
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
Ա. Մեսրոպի անվան
Մատենադարան
им. А. Мясникяна

ան դուռը. մարդիկ դժուարութեամբ էին շնչում ապականած օդը և քաղցից կիսամեռ իրար վրայ թափուում։ Իսկ դրա անմիջական հետևանք՝ հիւանդութիւնը կատարում էր իր կատաղի հունձը։ Տիֆը ահռելի չափեր առաւ։ Մեռնողները մնում էին կենդանիների հետ խառն, մոռացուած, այլանդակուած։ Զևի համար երբեմն գալիս էր կառավարական բժիշկը և դուռն ծակից դիտում ներսը, և առանց ներս մտնելու՝ հիւանդներին դեղ գրում։ Դեղ ընդունողները ի զարմանս ամենքի 24 ժամւայ ընթացքում մեռնում էին։ Դա անհերևակայելի ոճիր էր... դիտաւորեալ թունաւորումն... Այդ ձևի մեռնողները լինում էին նրանք, որոնք ուժեղ էին և կարող՝ դիմադրել այդ անտանելի կեանքին։ Գաղտնիքը հասկացուեց, բայց ոչ ոք չէր համարձակւում ձայն հանել։ Սարսափը տիրել էր ամենքին. նոր հիւանդները վերցնում էին բժշկի նշանակած դեղը և գաղտնի ոչնչացնում։ Բժիշկը նորից այցելում էր և զարմացած տեսնում, որ երեկւայ հիւանդը դեռ կենդանի է։

—Դեղը ընդունեցի՞ր, գեաւուր։

—Այո՛, էֆէնդիմ, պատասխանում էր հիւանդը դողդողալով.

—Բայց... կմկմում էր բժիշկը և այլայւած այդ անաջողութիւնից՝ շարժում իր գլուխը ու հազարապետի ականջին շշնջում խորհրդաւոր կերպով...

Հիւանդութիւնից ու բժշկի տւած թոյնից մեռնում էին ահագին թւով հայեր։ Ամբողջ թիւրքիայում կոտորածների միջոցին ձերբակալւած հայերի թիւը հասնում էր մօտ 25000-ի։ Մի ամիս վերջը միայն դրա կէսն էր մնում կենդանի, այն էլ կիսամեռ վիճակի մէջ...։ Եւ երբ արդէն „հունձը“ կատարւած էր, կառավարութիւնը յարմար դատեց վերջ տալ բանտային սարսափի երկրորդ ֆազին—սպիտակ տերրորին։ Բանտերի դռներն սկսեցին բացւել. սարսափը անցաւ։ Բայց հայերը վախում էին դուրս գալ բակը. այնտեղ վխտում էին թիւրքը ոճրագործները և ատամներ կրճատացնում „խային գեաւուրների“ հասցէին։

Հայերը թւով թիւրքերից շատ էին, ճիշտ է, բայց սարսափը այնքան մեծ էր, որ ստացած զրկանքին պատասխանելու միտքն անգամ յանդգնք էր համարւում։ Հայ կալանաւորները շատ աւելի գոհ կը լինէին, եթէ իրենց

սենեակների դռները գոց մնային։ Բայց դրա հակառակ, թիւրքերը իրենք էին ուժով ներս խուժում հայերի սենեակը և շարչարելով՝ դրամի, կերակուրի և հագուստի հազար ու մի խոստումներ առնում։ Զունեւոր, աղքատ հայ կալանաւորը, որ ոչինչ չէր կարող տալ, ամենօրեայ ծեծի ու տանջանքի էր ենթարկւում թիւրք բանտարկեալների կողմից։ Բողոքները անլսելի էին մնում։ Եւ ո՞ւմ բողոքէին, երբ պաշտօնեաներն էին յաճախ կազմակերպում այդ ոճիրները։

Այդ բաւական չէ. ունեւոր հային որևէ սրիկայ թիւրք իր հովանաւորութեան տակ է առնում և իր սենեակը տանում։ Դա նրա կեանքն կոչն է. ամեն ինչ նրանից է ստանում։ Տարիներով տաք կերակուրի, երես չը տեսնողը „փիլաւ“ ու „գօլմա“ է ուտում. և խեղճ կալանաւորը բերել է տալիս ամեն ինչ հազար ու մի զբաղանքներով, որպէսզի կարողանայ պաշտպանւել միւս սրիկաների սպառնական հալածանքներից. և զօրաւոր հովանաւորի „խաթեր“ համար միւսները հային գեաւուր չեն կանչում, այլ չորպաջի։ Եւ „չորպաջին“ հովանաւորողի միջնորդութեամբ կարող է տեսնել ընտանիքի կողմից եկած այցելուին, նրա միջնորդութեամբ կարող է իր առևտրական կիսատ պռատ հաշիւները կարգադրել, ի հարկէ որոշ տոկոս նրան „բախշիշ“ տալով։ Իսկ „հովանաւորը“ թէ բանտում և թէ՝ բանտից դուրս գալուց յետոյ՝ ամեն տեղ հայերի մօտ պարծենում է իր հայասիրութեամբ և շահագործում այդ հանգամանքը ուզած չափով...

Անցնենք քննութեան։

Անհերևակայելի է ազդած երկիւղը։ Ահա, օրինակ, Մալաթիայի բանտը։ Մութ խուցերում առանձնացրել են քաղաքի աչքի ընկնող հայերից 5 հոգի ջոկ-ջոկ։ Նրանց վրայ հագուստ չը կայ, մի շապիկ և մի վարտիք միայն։ Սգաւոր քաղաքը խոր քնի մէջ է. բանտում խակ, ուր աղմուկն ու աղաղակը անպակաս է, այդ ժամին կատարեալ լռութիւն է տիրում։ Մօտիկ խուցերից երբեմն լսւում են խուլ հառաչանքի ձայներ, ծանր տնքոց ու խրոխտոց։ Կալանաւորներից երկուսը ծեծի ու չարդի տակ ուժասպառ դարձած՝ այլևս ոտքի վրայ կանգնելու անկարող՝ ընկել են թաց ու ցեխոտ յատակի վրայ։ Վարտիքն

ու շապիկը թրջված և սառած կպել են նրանց մարմնին՝ ջարդված, արիւնով սևացած տեղերի ցաւը կրկնապատկելու համար. նրանք զառանցում են. դժւար է հասկանալ, թէ ինչ են խօսում: Միւս երեքը այս ձայներից սաստափած, իրենց հերթին են սպասում դողալով. ցուրտը մինչև ոսկորներն է թափանցել, ատամները միմեանց են զարկւում ու սառսուռ տարածում խուցի ճաթ խառուցներում:

Բացւում է խուցերից մէկի դուռը:

—„Դոկտէօր գէլսին, ձայն է տալիս գինուորը:

—Բժիշկ Ա... կորագլուխ դուրս է գալիս և ընկնում գինուորի առաջ: Բանտի բակից դուրս են հանում նրան և տանում փօլիսխանան, ուր նստած են մուավինը, հազարապետը և կոմիսէրը: Երեք ոստիկան և մի քանի ժանդարմներ ոտքի վրայ սպասում են:

—Արի, խային, տեսնենք ինչպէ՞ս կազմակերպեցիր գինուած խումբը և ուղարկեցիր Զէյթուն՝ օգնութեան, ասում է կոմիսէրը:

—Ստաֆուրուլլահ (քաւ լիցի) էֆէնդիմ, ես այդպիսի գործեր կատարող չեմ, ես վեհափառ սուլթանի սարուկն եմ:

—Է՛, խնգիր, դեռ սուլթանի անունն էլ ես առնում պղծած բերանդ. պապանձւի՛ր ու ճիշտ պատասխան տուր: Ասա, ոտքի ելաւ և մի ուժեղ ապտակ իջեցրեց բժշկի երեսին:

Նրա աչքերի մէջ երևացին արցունքի կաթիլներ:

—Ինչո՞ւ ես զար... Դեռ խօսքը չը լրացած՝ ապտակը կրկնւեց:

—Դեռ համարձակւում է պատասխան տալ այս խրն գիրը, պոռաց կոմիսէրը և ուզեց կրկին զարկել:

Մուավինը գարձաւ հազարապետին և կամացուկ նրկատեց, որ իր ներկայութեան զարկել չը տայ: Կոմիսէրը հասկացաւ այդ և յետ քաշւեց՝ կրկին առաջին հարցը առաջարկելով:

—Էֆէնդիմ, այդ հարցին պատասխանեցի, կրկնեց կալանաւորը,

Տիրեց լռութիւն: Մուավինը զգաց, որ իր ներկայութիւնը խանգարում է „քննութեան" գործին: Վերկացաւ և բինբաշու ականջին փսփսալով՝—„Չեզ տեսնեմ, առանց խօսք քաշելու՝ իր տեղը չը գրկէք",—դուրս գնաց և

կողքի սենեակը մտաւ, որպէսզի այնտեղից գաղտնի լսէ:

—Ձե՞ս ուզում խոստովանել, հա՞, գոռաց կոմիսէրը. հիմայ քեզ ցոյց կը տամ, թէ ինչ է նշանակում այդքան յանդուգն խօսել—զափթիէներ, սրան գետին գարկէք: Զափթիէները մի ակնթարթում վայր գլորեցին բժշկին և քացիների տակ առան: Սկսեց սովորական գարձած տանջանքը: Բժիշկը, որչափ այժ ունէր, զսպում էր իրեն. նա ամաչում էր ձայն հանել... Ահա ոտքի կանգնեց ինքը կոմիսէրը, իր ձեռքով „ջինիվիզը" անցկացրեց խեղճի երկու բթամատերին և սկսեց պտուտակը դարձնել: Ցաւի մի ծանր հառաչ դուրս թռաւ բժշկի բերանից, բայց նա իրեն նորից զսպեց. ատամները իրար կցեց, որ չլինի թէ գոռայ: Կոմիսէրը որքան այժ ունէր դարձրեց պտուտակը: Բթամատերի ոսկորները սկսեցին ճթճթալ, արիւնը դուրս ցայտեց... Բայց բժիշկը շարունակեց զսպել իրեն... Կոմիսէրը կատաղեց և հրամայեց զափթիէներին կատարել վերջին պատէրը: Չորսն էլ միանգամից յարձակւեցին և սկսեցին սղմել կալանաւորի ամորձիքը... Սա արդէն անկարելի էր տանել: Բժիշկը արձակեց մի այնպիսի ակամայ գոռոց, որ աւելի եգան բառաչի էր նման, քան մարդու կոչի: Տանջանքի ողբն էր այդ... Բոլոր ինկվիզիտորները այդ ձայնից ետ քաշւեցին. սէրայի բակում քնած պահապաններն ու պաշտօնեաները վազեցին իմանալու, թէ ում են տանջում: Միւս սենեակից դուրս եկաւ մուավինը և իբրև դժգոհ՝

—Այս ի՞նչ է, ի՞նչու է գոռում այս մարդը:

—Դեռաւորները լաւ միջոց ունին արդարանալու, դիտմամբ առաջուց են գոռում-գոչում, որ պատժից ազատւեն, վրայ բերեց կոմիսէրը:

Այդ ոչինչ, անիծածը խոստովանեց, որ ինքն է արել, աւելացրեց բինբաշին:

—Չէ, ես չեմ արել, կիսաշուշ արտասանեց բժիշկը՝ խրախուսւած մուավինի ներկայութիւնից,

—Շատ մի խօսիր, վրայ բերեց մուավինը, ես ականջով լսեցի... Տարէք սրան, հրամայեց նա:

Չորս զափթիէներ դուրս հանեցին դժբախտին փօլիսխանայի դռնից, ոտքերից բռնած քարերի ու ցեխերի միջով քաշ տուին տարան, նախկին խցիկի դռնից ներս գլորեցին: Դուռը գոցւեց...

Մի ուրիշ պատկեր:

Դէպքը պատահում է Մարաշում։ Բոլոր հայ բանտարկեալներին տանջել, չարչարել, խոստովանեցրել են և լցրել գափթիէների ախոռներում, ձիերի աղբի մէջ։ Հերթը հասաւ Արթին Ղույումջեան փաստաբանին. նա տալիս է „օրէնքի“ թելադրած պատասխանները։ Նրանից չեն կարողանում խօսք դուրս քաշել։ Սպառնալիք, ծեծ, որ կատարած է յատուկ տանջող մահակով, օրերով սոված թողնել, անքուն պահել—բոլորը փորձած է։ Ցաւից ու յոգնածութիւնից խեղճն այլևս շարժուել չէ կարողանում։ Վերջին անգամ նրան կանչում են և նորից պահանջում՝ յայտնել, թէ „ինչ ծրագիր էին կազմել հայերը, եթէ զէյթունցիները Մարաշ թափուելու լինէին“։ Նա անյողդողդ է... Ահա գազանացած հաղարապետը մռնչաց և հրամայեց վերջին միջոցին դիմել։ Ինքը դուրս եկաւ։ Գափթիէները ներս բերեցին պատրաստած „զազուխը“ և բոլոր ոյժով ներս անցկացրին դէպի հաստ աղիքը։ Կալանաւորը գալարուում է ինչպէս վիրաւոր օձ՝ շաղախուած իր սեփական արեան մէջ։ Եւ տանջող անմեղի դիմաց՝ պաշտօնեաները մեծ զարմանք են զգում. նրանք հրահրում են և հրճուում՝ Մահմեդի հնարած „սրամիտ“ տանջանքը դիտելով։

Փաղիշահին ծառայելու տենչանքով բռնուած՝ ի՞նչ տանջանքներ ասէք չեն տուել հայ քաղաքական բանտարկեալներին թիւրք պաշտօնեաները։ Նրանց հրամանով քանի՞-քանի բանտերում բռնաբարել են հասակաւոր տղամարդկանց՝ նրանցից խօսք քաշելու նպատակով։ Եւ քանի՞-քանի անգամ հայ բանտարկեալը իր պատիւը փրկելու համար, ստիպուած է եղել սուտ խօսել չեղած իրողութիւններ պատմել, գործի մէջ չունեցած իր մասնակցութիւնը յայտնել համակերպել ոստիկանութեան նենգ, չարամիտ ծրագիրներին և ստորագրել նախօրօք պատրաստած կեղծ ցուցմունքներին...

Եւ դա անլանելի է քննութիւն...

Օրէնքով քաղաքական բանտարկեալները շատ աւելի ազատութիւններ ու դիւրութիւններ պիտի ունենան, քան սովորական բանտարկեալները, որովհետև նրանց պատիժը որքան և ծանր լինի, թէկուզ 101 տարուայ դատապարտուած, բոլորն էլ բերդարգել են համարուում, մինչդեռ քրէական յանցաւորները՝ թիապարտ։ Բերդարգելները

պէտք է տարբեր, աւելի մաքուր տեղ ունենան, քան թիապարտները, և բացի սովորական թայինից, պիտի ստանան նաև օրական 4 զուրուշ դրամ. բերդերում նրանք ազատ պիտի լինեն բանտային կեանքից և պիտի ապրեն պարզապատ քաղաքի մէջ, իբրև աքսորականներ, և պարապեն ուզած գործով։ Բայց այդ „օրէնքը“ ոչ մի տեղ գործ չի դրուում. նրանք ոչ դրամ են ստանում և ոչ էլ բերդերում ազատ են բանտային կեանքից։ Մինչդեռ ընդհակառակը շատ թիապարտ ոճրագործներ այդ իրաւունքն են վայելում, միանգամայն հակառակ օրէնքի տրամադրութեան։

Թիւրքական բանտերում եթէ հսկողութիւն կայ, այդ միայն քաղաքական բանտարկեալների համար է, և այն՝ յատկապէս հայերի։ Մինչդեռ որևէ ոճրագործի մօտ եկող այցելուին, համարեա առանց բացառութեան, ներս են ընդունում, մի բան, որ „օրէնքով“ արգելուած է, քաղաքական բանտարկեալների այցելուին ոչ միայն ներս չեն թողնում, այլ և սովորական յանցաւոր հայերի այցելուներին արգելում են ներս մտնել, „որպէսզի նրանք լուրեր չը տանեն-բերեն քաղաքական բանտարկեալների մասին“։ Նրանց արգելուում է նոյնիսկ վանդակապատին մօտենալ առանց հսկողութեան։ Այցելուն՝ հեռու կանգնած պիտի բարձր խօսի և այն էլ թիւրքերէն. մի ոստիկան էլ, հայերէն հասկացող, որ կամ լրտես է և կամ մահմեդականացած հայ, նստում է մօտը, որ հայերէն մի կասկածելի բառ լսելու դէպքում իմաց տայ ոստիկանութեան։ Յաճախ է պատահել, որ անմեղ այցելուին ներս են նետել և ամիսներով բանտում պահել։ Չը նայելով այդ անսովոր խստութիւններին՝ հայերը այնուամենայնիւ լուր, նամակ ստանալու կամ ղրկելու գործում առանձին նեղութիւն չեն կրում։ Ոստիկանները և պահապանները ամենափոքրիկ կաշառքով, մի դահեկանով իսկ, պատրաստ են ծառայութիւններ մատուցանել ի հարկէ գաղտնի։

Եթէ բանտը պատժի միջոց է, այդ միայն քաղաքական յանցաւորների համար է։ Բանտային զարմանքների մէջ, որ մենք արդէն նկարագրեցինք, նրանք բոլորովին մասնակցութիւն չունեն։ Այդ „զարմանքը“ միւս կողմից, շատ է ստոր, որ կարողանայ հրապուրել քիչ շատ մաքուր ու բարոյական հակումներ ունեցող մարդկանց։ Թալանի անկումը, կեղծիքը, ինտրիգը զզուելի

են դարձնում այն հիմնարկութիւնը, որ ուղղիչ միջոցի անուան տակ ներկայանում է մի ամբարոյանոց. լոյս աշխարհից, սիրելիներից ու հայրենիքից տարագիր վիճակը չէ, որ ծանր է գալիս հալածական կալանաւորին, որքան այն միտքը, թէ ինքը ստիպած է տեսնել և կրել այդ զազիր վիճակը և... լռել:

Լռում է նա, այդ կենդանի թաղուածը խոնաւ ու մութ գերեզմանում, բայց երբէք չէ թողնում իր միակ մխիթարութիւնը — յոյսը, նրան պահելով իբրև միակ անձեռնմխելի սեփականութիւն, մինչև որ գանէ տարիներով փրնտրած իր ազատ կեանքը և կամ մինչև որ մահուան վերջին կոչը սարսուռով մօտենայ խլելու նրա կենդանի շունչը՝ ընդ միշտ տանելով նրա այնչափ փայփայած ու ակնկալած „մեծ յոյսը“:

III

Ընդհանուր ներումներ. Խաղեր արտաքին աշխարհի հանդէպ. Հարցաքննութեան հողոմարդոյ սիստեմը. Խոստովանողները. Մի բնորոշ օրինակ. Դաղտնապահութիւն:

—

Երեք հարիւր հազար հայերի արեան գնով սուլթանը ընկճեց հայկական շարժումը և անցած կարծելով հայկական ազատութեան սպառնացող ուրուականը, որպէս զի ջնջէ դիւանագիտական պահանջների, ընդհանուր ներումներ շնորհեց հայ քաղաքական բանտարկեալներին: Հազարաւոր հայեր ազատութիւն ստացան: Բայց դա շատ կարճատև եղաւ: Հազիւ մի ամիս բանտերը թափուր մնացին քաղաքական բանտարկեալներից: Թիւրք պաշտօնեաները՝ Պոլսից եկած հրամանի համաձայն՝ մի ձեռքով ազատածները՝ միւս ձեռքով ժողովել սկսեցին: Բանտերի դռները նորից բացուեցան և նորից հատ-հատ, խումբ-խումբ սկսեցին գալ սուլթանի անհաւատարիմները:

Վերջին ընդհանուր ներումը 1897 թուի գարնանն էր, մարտ ամսին: Նոյն թուի ապրիլի 7-ին Մարաշի բանտում 32 հայ քաղաքական յանցաւորներ կային՝ Զէյթունից և նրա շրջանից, Ալպիստանից ու Մալաթիայից: 22 օր միայն բանտը պարապ մնաց հայերից: Նոյն դրութեան

մէջ էին բոլոր հայաբնակ քաղաքները: Նրանից յետոյ ընդհանուր ներումն այլևս չ'եղաւ, որովհետև սուլթանը տեսաւ, որ ազատութեան կրակը դեռ չէ հանգած հայկական լեռներում, բայց դրսի ատիտորին խաբելու համար նա մի-երկու անգամ՝ 1900—1901 թուերին՝ մանանակի ներումներ տուեց այնպիսի վայրերում, ուր վտանգը մօտալուտ չէր և այն էլ՝ միևնոյն շրջանի հատ-հատ քաղաքներում և ոչ բոլոր բանտարկեալների համար: Թիւրք քաղաքականութիւնը գիտէ լաւ ընտրութիւն անել նման պարագաներում: Բաւական է, որ Պոլսի թերթերը յայտարարեն. „Շնորհիւ վեհ. սուլթանի՝ Էրզրումի, Վանի Բիթլիսի նահանգներում բազմաթիւ հայ քաղաքական բանտարկեալներ ազատ արձակուեցան“, իսկ այդ լուրը հեռագրերով եւրոպական մամուլին հասնելով՝ հանգստացնէին հայկական խնդրով շահագրգռուած դիւանագէտներին: Խաղը շատ լաւ էր սարքուած՝ թիւրքիայից դուրս թող փչելու, իսկ ներսը խեղդելու համար ամեն մի ձայն, ամեն մի ձիգ:

Սակայն բոլոր փորձերը զուր են անցնում: Հայկական ազատութեան միտքը նորից ծայր է տալիս, թիւրքը շփոթուում է, ինչ անելը չը գիտէ. միակ միջոցը բանտն է և նա յարատևում է անվերջ: Օսմանեան կառավարութեան պաշտօնեաները հասկանալ չեն կարողանում, թէ այս ինչ տեսակ ցեղ է, որ ոչ խրատն է ըմբռնում, ոչ պատիժն զգում, ոչ էլ կոտրուելով՝ անյայտանում աշխարհի երեսից: —„Նէ արսըզ միլլէթէ չաթմը ը, այսքան ջարդեցինք, այսքան տանջեցինք, նորից մեր բանտերը լցւում են դրանցով„, գոռում է Ալի-բէյը կամ բինբաշին և հրամայում բանտային պաշտօնեաներին աչալուրջ լինել, որ նոր եկածները միմեանց հետ չը տեսնուին և ոչ ոքի հետ յարաբերութիւն չ'ունենան, մինչև քննութիւնների վերջանալը:

Այժմ վերաբերմունքը տարբեր է: Թէ թիւրք ամբոխը և թէ պաշտօնեաները վարժուել են ասել, որ հայը բողոքում է, դժգոհ է, որ հէնց դրա համար էլ պէտք բանտարկի, պատժի օրէնքով. բաւական է, որ նա ակտիվ գործի մէջ չէ եղել, այլ յանցաւոր է մի թղթի, մի նամակի, մի երգի պատճառով. ճիշտ է, նա նորից խաչին է, բայց նրան մինչև մահուան դուռը հասցնելու կարիք չի զգացւում: Սարսափը համատարած չէ: „Ցեղա-

փոխութիւնը ջախջախուածէ“, մի քանի պ ա ր օ ն ն ե ր* են միայն, որոնց հետ խորամանկութեամբ, կեղծաւորութեամբ վարուելով՝ կարելի է խնդիրը հասկանալ, չարիքի առաջն առնել։

—„Կուզում, օղլում,—այսպէս է սկսում քաղցրախօս բինբաշին կամ կօմիսէրը, դու երիտասարդ ես, չը գիտես օգուտդ. դու անմեղ ես։ Քեզ բերել ենք միայն հարց ու փորձի համար։ Մի՛ վախենար, հէնց վաղը կը թողնենք քեզ։ Բայց հարկաւոր է, որ ամեն ինչ ճշտութեամբ պատմես. դու այս գործում վկայ կը ներկայանաս, քո ցուցմունքը կը տաս և կը թողնես գործիդ կ'երթաս։ Մեսրոպը ամեն բան յայտնեց, նա ասաց որ դու էլ գիտես այդ բոլորը. ինչո՞ւ ես թաքցնում, դու էլ պատմիր, ինչ գիտես նրա մասին։ Գիտենք, որ նա է ամեն բան անողը, առանց քո վկայութեան էլ նա արդէն մեղաւոր է. բայց ես քո մասին եմ մտածում, չեմ ուզում, որ դու էլ պատժես. գիտեցած եղիր, լռութիւնը յանցանքի նշան է։ Եթէ միշտ ասես. „չը գիտեմ, ես տեղեկութիւն չ'ունեմ“, դու իբրև յանցաւոր, որ փաղիշահին հարկաւոր եղած տեղեկութիւնները գլանում ես յայտնել, կը դատապարտես։ Ես ասում եմ քեզ ամեն ինչ, որ լաւ կշռես քո չարն ու բարին. ուզո՞ւմ ես ազատուել ու տուն երթալ, արա, ինչպէս ես եմ ասում“։

Այս սովորական խորամանկ քարոզներն են, որ գործ են դրուում ամեն տեղ և դրանցով էլ շատ շատերին թակարդ ձգում։ Բաւական է, որ խնդրի ծայրը դուրս եկաւ, այլևս պրծնումն չը կայ։ Որքան շատ խօսեց, որքան շատ տեղեկութիւններ տուեց, այնքան էլ շատ է յանցանքը, այնքան էլ „շատ տարիներ կը հագցնեն նրան“։ 101 տարին սովորական է, երբ մէկը իր բերանով խոստովանի իր մի անմեղ քայլը, օրինակ յեղափոխական մի երկու բառ պարունակող նամակ ստանալն ու մի ուրիշին յանձնելը։ Զղջումը վերջն է լինում, բայց արդէն ուշ է։ Վերջն է, որ թակարդ ընկածը գլխին ու ծնկերին է տալիս, բայց այդ ոչնչով չէ օգնում։

Եթէ դիմացինը տատանուող է, փորձում են խաբել

* Թիւրքիայի մի քանի տեղերում, ի միջի այլոց ամբողջ Կիլիկիայում, հայ յեղափոխականներին ընդհանուր անունով Պ ա ր օ ն են անւանում։

այլ միջոցներով։ Խոկոյն պատւիրում են լաւ սենեակում հիւրասիրել, փափուկ անկողին տալ, փաշայի անից կերակուր տանել, եթէ դրամ է ուզում, այդ էլ չը խնայել։ Եւ այդ ձևով շատ շատերին են կարողանում խօսեցնել տալ, նոյն իսկ իր ընկերների մ ա տ ն ի չ ը դարձնել։ Եւ մինչդեռ թշւառականը այդ զոհողութիւնները յանձն է առնում միայն իր կաշին ազատելու յոյսով, թէկուզ դրա համար ծախած լինի իր գաղափարական ամբողջ կեանքը, վերջը դուրս է գալիս, որ նա ոչ միայն մատնիչի սև անունն է ժառանգում, այլ և հակառակ իր երազների, դատապարտւում է և պատժւում ամենածանր կերպով։ Մի մարդ, որին ոչ ոք երես չի տալիս, որի հետ ոչ ոք խօսել չի ուզում, մի մարդ, որ կրում է իր մեծ յանցանքի պատիժը—իբրև դ ա ւ ա ճ ա ն իր ընկերների, իբրև ո ւ բ ա ց ո ղ իր թերևս մի ժամանակ փայփայած գաղափարների։

Մի բնորոշ օրինակ։

Տիգրան անունով մի երիտասարդ, 1899 թւի յունիսի սկզբին, ձերբակալւում է Ալէքսանդրէտում՝ արտասահմանից մի նամակ ստանալու և Զէյթուն ուղարկելու մեղադրանքով։ Մարաշ փոխադրւելով, ենթարկւում է քննութեան հէնց այն ժամանակայ միւթէսարրիֆ՝ Կարա-Մուրսալ Զադէ փաշայի կողմից։ Փաշայի կեղծաւոր, նենգ ու քաղաքավարի վերաբերմունքը և ամեն տեսակ դիւրութիւններ ու խոստումներ տալը այնքան են քաջալերում և յուսադրում անհեռատես կալանաւորին, որ նա ոչ միայն յայտնում է նամակի ինչ լինելը, որտեղից գրւելը, ում ուղարկւելը և որոնց ձեռքով փոխադրւելը, այլ և իր կաշին փրկելու յոյսով՝ աւելացնում է այնպիսի տեղեկութիւններ, որոնցով թիւրք կառավարութիւնը անպաճառ պիտի շահագրգռւէր։ Նա յայտնում է, որ նամակի մէջ ակնարկւած անձնաւորութիւնները ռուսահայեր են, որոնք եկել են յատկապէս ուսումնասիրելու Կիլիկիայի դիրքերը և ժողովրդի ռազմական կարողութիւնը, որպէսզի տեղեկագիր ներկայացնեն Կովկասում գոյութիւն ունեցող յեղափոխական մարմնին, որի որոշման համեմատ՝ հարկաւոր եղած զէնք, մթերք ու պաշար պիտի մտնի Կիլիկիա, հայ ժողովուրդը ապստամբեցնելու համար թիւրք կառավարութեան դէմ։ Նա յայտնում է, որ յիշած բոլոր ռուսահայերը ապրում են Թիւրքիայում իբ-

ըև ոչ-Հայեր։ Եւ որպէս ապացոյց իր ասածների՝ նա մատնացոյց է անում մի Բոլգար, անունը Դիմիտրի Մարինով-Պոպով, որ հէնց այդ միջոցին „գրամոֆոն“ գործիքով իր օրապահիկն է վաստակելիս եղել Այնթապում և մի Վրացի, անունը Արաեմ Խաղիկով, որ ռուսական ապրանքներ է ծախելիս եղել Ալէքսանդրէտում։

Կասկածամիտ կառավարութիւնն էլ հէնց առիթ էր փնտրում՝ Կիլիկիայում ձերբակալութիւններ սկսելու համար։ Խոշոր զօրքեր են ուղարկւում Մարաշից, Սիսից և Հաճընից՝ բռնելու Զէյթունի գլխաւոր անցքերը։ Ճանապարհորդները բոլորն էլ քննութեան են ենթարկւում։ Սկսւում է ամբողջ մի քաղաքական հալածանք։ Հեռագրով Ալէքսանդրէտից պահանջւում է Խաղիկովը, որ բարեբախտաբար արդէն մեկնած է լինում։ Այդ հանգամանքը աւելի խորհրդաւոր է դարձնում գործը։ Հեռագրով ձերբակալել են տալիս և Բոլգար Դիմիտրիին Այնթապում։ Մինչև այդ ժամանակ արդէն ձերբակալւած են լինում յիշած նամակը Ալէքսանդրէտից Զէյթուն փոխադրող կամ նրա հետ առնչութիւն ունեցող 7 հայեր և մի քիւրդ։ Դիմիտրիի մօտ ոչինչ չեն գտնում. նա ինքը կասկածելի լինելու ոչ մի նշան չի ունենում։ Կառավարութիւնը համոզւում է, որ այդ ամբողջ պատմութիւնը յերիւրանք է, բայց ի՞նչպէս դիւրութեամբ բաց թողնել մարդկանց, որոնք որչափ անմեղ են, նոյնչափ էլ կասկածելի կարող են լինել։ Ի՞նչպէս է լինում, որ Տիգրանը գիտէ այդ Բոլգարի գոյութեան մասին, եթէ սա որևէ կապ չէ ունեցել հայերի հետ։ „Այստեղ երևի մի բան կայ“, մտածում է թիւրքական „արդարադատ“ դատարանը և իբրև արդիւնք իր ենթադրութիւնների, դատապարտում է Դիմիտրիին 5 տարեայ բանտարկութեան։ Եթէ նա հայ ճանաչէր, և ուրեմն Տիգրանի ամբաստանութիւնը ճիշտ դուրս գար, անպատճառ մահւան կը դատապարտուէր։ Վրացի Խաղիկովը ի բացակայութեան դատապարտուեց մահւան. նրա մասին կասկած է մնում, թէ թերևս հայ էր, ուրեմն և արժանի այդ պատժին։ (Թիւրք դատարանները մահւան են դատապարտում բոլոր այն քաղաքական ամբաստանեալներին, որոնք իր ձեռքը չեն անցնում, ենթադրելով որ փախուստն արդէն ապացոյց է յանցանքի)։ Ձերբակալւածներից միայն մարաշցի կարա-Գեաուրեան Արթին ու իր հովիւ՝ քիւրդ Օ-

կեաշն ազատուեցին, և այն՝ 150 ոսկի կաշառքով։ Միւսները՝ Զոբ-Մարգանցի Պօղոս Թղլեան, մարաշցիներ՝ Նազարէթ, իր հօրեղբօր որդի ջորեպան Մկրտիչ և մնագործ Սարգիս Առաքելեան (սա նոյնպէս թակարդն ընկնելով փաշայի խոստումներից, ամբաստանել էր վերը յիշած Պօղոս Թղլեանին, որ բոլորովին կապ չէ ունեցել նամակի խնդրի հետ)), դատապարտուեցան 5 ական տարեայ և ջորեպան Դաւիթ մի տարեայ բանտարկութեան։ Իսկ ամբողջ դէպքի տխուր հերոսը՝ Տիգրան դատապարտուեց մահւան։ Բոլոր դատապարտածները այժմ ազատ են բացի այն թուրմարթ արարածից, որ երազում էր ուրիշներին, նոյնիսկ օտարականներին, կառավարութեան յանձնելով՝ փրկել իր կաշին։

Եւ դա է ու կը լինի վիճակը այն բոլոր տխմարների, որոնք խաբւած կառավարութեան նենգ խոստումներից, կը փորձեն իրենց փրկութիւնն ու շահը ուրիշների կոխուստի մէջ որոնել...

Գ ա ղ ա ն պ ա հ ո ւ թ ի՛ ւ ն մինչև վերջին շունչ և ոչ երբէք խոստովանութիւն։ Այս պիտի լինի նշանաբանը բոլոր քաղաքական կալանաւորների, հաւատամքը ամեն մի յեղափոխական ձերբակալւածի։ Ոչ մի զիջումն ո՛չ սպառնալիքների և ոչ խոստումների դիմաց։ Այդ է պահանջում թէ՛ գործի և թէ՛ նոյնիսկ բանտարկեալի շահը։

IV

Պատիժներ. Տարբերութիւն քրիստոնեաների եւ մահմեդականների միջեւ։ Ներման օրէնքը. Ոնիրներն ըստ ազգութեան եւ տեսակի. Բանտարկեալների ընդհանուր թիւը. Եզրակացութիւն։

—

Յանցանքները պատժելու համար Թիւրքիայում, իհարկէ, կան օրէնքներ, և դրանք բոլորն էլ վստահ կարելի է ասել, շատ բարձր են թիւրքական արդարութեան ընդհանուր մակերևոյթից, որովհետև առնւած են թարգմանաբար և կոյր հետևողութեամբ ֆրանսիական օրէնքից՝ առանց յաձախ ըմբռնելու նրանց էութիւնն ու իմաստը։ Կեանքի մէջ այդ օրէնքները մնում են մեռած տառեր։ Պատժի չափը կախւած է դատարանի բացարձակ կամքից՝ նայելով թէ ինչ վերաբերմունք ունի նա դէպի

յանցաւորը՝ ըստ նրա ազգութեան, դիրքի, անձնական կապերի և մանաւանդ նրա գործ դրած ոսկիների։

Ընդհանրապէս առնելով Թիւրքիայում ոչ մի յանցանք այնքան խիստ չէ պատժւում, որքան քաղաքականը։ Նախորդ գլխում մեր բերած օրինակները բաւական խոշոր ապացոյցներ են դրան։ Ամենից քիչ պատիժ կրող յանցանքը այնտեղ աւազակութիւնն է։ Սովորական պատիժը դրա դէմ երեք տարի է։ Բանտերից մէկում եղած 24 աւազակ բանտարկեալներից 23-ը երեք տարուայ պատիժ ունէին. միայն մէկն էր 6 տարուայ դատապարտուած և այն էլ նրա համար, որ տարիներ առաջ նոյն յանցանքով նշանակուած պատիժը վերջացնելուց յետոյ, նորից ձերբակալուեց և այդ պատճառով կրկնակի պատիժ ստացաւ։ Այդ երեք տարին, աւելի ճիշտ երկու տարին (մէկ տարին ներւում է, ինչպէս կը տեսնենք վերը) շատ չնչին պատիժ է համարւում Թիւրքիայում աւազակութիւնը արհեստ դարձրած և նրանով հպարտ՝ չէրքէզ, քիւրդ, Թիւրք, առնաւուտ և այլ տարրերի համար, որոնց կարծիքով „մի կողքի վրայ պառկելով“ իսկ երկու տարին կարելի է անցկացնել։ Թերևս մասամբ էլ պատժի „թեթևութիւնն“ է պատճառ, ի շարս այլ բազմաթիւ պատճառների, որ Թիւրքիայում աւազակութիւնը չէ նւազում և սահմանափակւում...

Միւս յանցանքները համեմատաբար աւելի խիստ են պատժւում։ Մարդասպանութիւնը, եթէ այդ կատարուած է նախամտածուած կերպով, դատապարտւում է 15 տարուայ թիապարտութեան, ինքնապաշտպանութեան դէպքում՝ 3 տարուայ։ Գողութիւնը 1—3 տարով։ Բռնաբարութիւնը՝ կատարուած աղջկայ թէ տղայի վրայ՝ դատապարտւում է 3 տարուայ բանտարկութեան։

Յանցանքների պատիժները փոխւում են, երբ ոճիրը կատարուած է մահմեդականի կողմից քրիստոնեայի վերաբերմամբ և հակառակը։ Հէնց աւազակութիւնը, որ, ինչպէս ասացինք, Թիւրք կառավարութեան տեսակէտով՝ համարւում է ոչ ծանր պատժի արժանի մի գործ, դրա մեծ ապացոյցներից մէկն է։ Ինչպէս յայտնի է, Թիւրքիայում աւազակութեան ենթարկուողը քրիստոնեայ տարրն է։ Աւազակը մահմեդականին չի դիպչում։ Շատ դէպքեր են լինում, երբ աւազակները քարվանի առաջը կտրելով, մահմեդականներին ջոկում են հայերից, նրանց ապրանքին ձեռք չեն տալիս, իսկ մնացածը խլում և ուզած ձևով բաժանում են։ Այդ շատ լաւ գիտէ կառավարութիւնը և դիտմամբ աւազակներին չը սարսափեցնելու համար ամենաթեթև պատիժն է ընտրել։ Բայց եթէ գողացածը Թիւրքի ապրանք է, լինի դա մի բարձ թէ մի չնչին զարդարանք, նա աւելի արժէք ունի Թիւրք կառավարութեան աչքում, քան հայի հարիւր ոսկի արժեցող մի հակ եւրոպական ապրանքը։ Հայերը շատ գոհ կը լինէին, եթէ ամեն մի աւազակութիւն գէթ այդչափ պատիժ ստանար. այդ էլ չը կայ։ Երկրում կատարուող աւազակութիւնների հինգ տոկոսն լսկ չի պատժւում այդ թեթև պատժով։ Պատիժն էլ տրւում է միայն այն դէպքում, երբ աւազակը պատահմամբ՝ գողացած ապրանքը որևէ քաղաքում ծախելիս՝ ճանաչւում է Թալանած հայի կողմից, և կառավարութիւնը աւազակին բացարձակ պաշտպան չը ներկայանալու համար՝ ստիպւում է ձերբակալել նրան։

Բանտերում եղած ուսումնասիրութիւնից երևում է, որ մահմեդականների կողմից հայերի դէմ կատարուած ոճիրները մնում են անպատիժ։ Յաճախ կառավարութիւնը սպանուած հայերի դիակը անհետացնում է և բողբոջ ազգականներին մեղադրում զրպարտութեան մէջ։ 1902 թ. ամառը զէյթունցի 3 հայեր սպանուեցին Թիւրքարնակ Դաղաղլի և հայաբնակ Գնդըջակ գիւղերի մէջտեղը։ Ոստիկանութիւնը լսելուն պէս՝ գլուխ ունենալով բինբաշին՝ գիշերով տեղ է հասնում, այրում դիակները ու հետքը անյայտացնում։ Այն ինչ առաջուց արդէն այդ մասին լուր է տարածւում լինում Գնդըջակ գիւղում և շատ գիւղացիներ հետաքրքրւելով՝ գնացած ու տեսած են լինում դիակները։ Միհրդատեան անունով պոլսեցի մի սարկաւագ, որ այդ միջոցին այնտեղ է գտնուելիս եղել՝ պատրիարքի կարգադրութեամբ, գիւղացիներից իմանալով եղելութիւնը, մի ուրիշ տեղ մի քանի ազգեցիկ հայերի պատմում է իրողութիւնը։ Կառավարութիւնը հասկանալով թէ լուր տարածողը նա է, իսկոյն ձերբակալում է նրան՝ իբրև խռովութիւն առաջ բերելու դիտումով՝ սուտ լուրեր տարածողի։ Ինչ խօսք, որ Գնդըջակցիները, որոնք դիակները սեփական աչքերովն էին տեսել, սարկաւագի ձերբակալումը իմանալով՝ վախեցած թէ մի գուցէ իրենք էլ նեռւին բանտ, քննութեան ժամա-

նակ ուրացան ամեն ինչ և միայն դրա շնորհիւ ազատ արձակուեցան, իսկ սարկաւագը դատապարտուեց մէկ ու կէս տարուան բանտարկութեան։

Մարաշի ամբողջ սանջակում (իր հինգ զաղաներով միասին) վեց տարվայ ընթացքում հայերի դէմ եղած անթիւ ոճիրներից միայն մէկը թեթև պատժի ենթարկուեց։ Սարըլար թիւրքաբնակ գիւղում, ուր միայն մի քանի ընտանիք թիւրքախօս հայ կայ, 1899 թ. մայիսին՝ 15 զինուած թիւրքեր գիշերով յարձակւում են մի հայ տան վրայ և բռնի փախցնում աղջիկը, որ նշանուած էր իր դրացի Արթինի հետ։ Թիւրքական դատարանը 15 յանցաւորներից միայն մէկին—Մոլլա Մստաֆային դատապարտեց երեք տարուայ բանտարկութեան՝ և այն՝ ֆրանսիական հիւպատոսի ստիպողական պահանջներին գոհացում տալու համար։ Մինչդեռ օրէնքով տան վրայ կատարուած զինեալ յարձակումը 15 տարուայ պատիժ ունի։ Դրա հետ միասին փեսացու Արթինին ևս 5 ամիս բանտում պահեցին, մեղադրելով, որ նա զէնքով դիմադրել է յարձակողներին... Թիւրքական արդարադատութեան մի փոքրիկ նմուշ է դա։

Դրան տրամագծօրէն հակառակ, Թիւրք դատարանը խիստ ծանր պատիժ է տալիս հայերին, եթէ նրանք որևէ յանցանք են գործել թիւրքերի դէմ։ Շատերից մի օրինակ. 1900 թ. հոկտեմբերին, երկու հայ երիտասարդ՝ զէյթունցի Վարդիվոր և կապանցի Յարութիւն՝ յարձակում գործեցին Անդրընի մօտերքը թիւրք քոչւոր մի ընտանիքի վրայ, տղամարդին վիրաւորեցին և կնոջը սպանեցին։ Հաղւագի՛ւտ դէպք։ Դա տեղի ունեցաւ սոսկ թալանելու մտքով։ Բայց այդ պարզ ոճիրը մի ահագին քաղաքական փոթորիկ բարձրացրեց երկու ամբողջ վիլայէթների—Ադանայի և Հալէպի շրջաններում։ Ամեն կողմ զօրքեր, խստութիւն, հալածանք։ Զէյթունի շրջականները լցուեցին զօրքերով ու վրիժառու թիւրք ամբոխով։ Զէյթունցիք ստիպուած եղան յանցաւորներին յանձնել, որոնք կարճ միջոցում դատապարտուեցան առաջինը՝ մահուան, իսկ երկրորդը՝ հարիւր մէկ տարուայ բանտարկութեան։ Այն ինչ միևնոյն բանտում եղած 28 թիւրք մարդասպաններից միայն մէկն է հարիւր մէկ տարուայ բանտարկութեան դատապարտուել և այն 3 հոգի—կնոջը, զօրանչին և անարին—միանգամից սպանելու համար։

Թիւրքիայում բոլոր բանտարկեալները, բացի քաղաքական յանցաւորներից ու բռնաբարութեան մէջ մեղադրուողներից, չեն լրացնում վճռուած դատապարտութեան ժամանակամիջոցը, այլ նրա երկու-երրորդ մասը։ Ֆրանսիան է կոչւոր այդ ներումը հնարել է սուլթան Համիդ իր թագաւորութեան առաջին տարուանից սկսած և որը գնալով այժմ օրէնքի կերպարանք է ստացել։ Հրամանը պէտք է գայ հեռագրով Պոլսից՝ սուլթանի իրատէով, որ տրւում է թիւրքական մեծ տօներին՝ տարուայ ընթացքում 4-5 անգամ՝ Մէվլուտին (Մահմէդի ծնունդ) բայրամներին և սուլթանի ծննդեան ու գահակալութեան տօներին։ Այդ հեռագրի համաձայն, նոյն օրն և եթ արձակւում են այն բանտարկեալները, որոնք լրացրել են իրենց պատժի երկու-երրորդ մասը։ Այդ ներումը չէ տարածւում քաղաքական յանցաւորների վրայ, իբրև սուլթանի գերիշխանութեան դէմ բողոքող ընդվզող տարրի։ Սուլթանը այդ ներումից զրկում է նոյնպէս և բռնաբարութիւն կատարողներին. սա „թիւրիմացութիւն“ է թիւրք հայեացքի և մի անախորժ ակտ քաղաքական յանցաւորների ինքնասիրութեան համար, որոնք ուրախ կը լինէին այդպիսի վիճակակիցներ չունենալ...

Այժմ մի փոքր վիճակագրական համեմատութիւն։

Մարաշի սանջակում, որի մէջ մտնում են Զէյթունի, Ալպիստանի, Անդրընի, Կոկիսանի և Բազարջիկի զաղաները, ազգաբնակութեան թիւն է մօտ 195 հազար, որից 109 հազարը թիւրք, 57 հազարը՝ հայ, 24 հազարը՝ քիւրդ և 5 հազարը՝ չէրքէզ։ Վեց տարուայ ընթացքում այդ շրջանի բանտարկեալների թիւը երբէք չէ իջել 170-ից և չէ անցել 240-ից։ Դրանցից թիւրքերը՝ նաւագոյն 122, առաւելագոյն 133, հայեր՝ 19 և 53, քիւրդեր՝ 25 և 48, չէրքէզներ՝ 4 և 6։ Նկատելի է հայ ու քիւրդ բանտարկեալների երբեմն խիստ աճումը—հայերինը՝ իբր հետևանք յաճախակի կրկնւող քաղաքական ձերբակալութիւնների, իսկ քիւրդերինը՝ աշիրէթական կռիւների պատճառով կատարւող խմբական բանտարկութիւնների։ Ըստ յանցանքի, այդ թւից սովորական գողերը կազմում են 62 և 68, քաղաքական յանցաւորներ՝ 12 և 43, մարդասպաններ՝ 27 և 30, աւազակներ՝ 21 և 24, աշիրէթական ընդհարումների և գլխաւորապէս աղջիկ փախ-

ցնելու խնդրով՝ 28 և 50, ապջկայ բռնաբարում՝ 13 և 16, տղայի բռնաբարում՝ 7 և 9։

Եթէ հայ ընդհանուր բանտարկեալներից հանենք քաղաքական յանցաւորները, կը մնայ 7 և 10, որից երկուսը մարդասպաններ, իսկ մնացածը մանր գողեր։ Համեմատելով ոճրագործների թիւը ազգաբնակութեան թւի հետ, տեսնում ենք որ իւրաքանչիւր տաս հազար բնակչին ընկնում է՝ հայերի մէջ երբեմն 1 և երբեմն 2 յանցաւոր, թիւրքերի մէջ՝ 11 և 12, քիւրդերի մէջ՝ 10 և 20, չէրքէզների մէջ՝ 8 և 12։ Մինչդեռ բանտարկեալների մէջ ընդհանուր առմամբ հայերը քաղաքական յանցաւորներ են, միւս ազգերից և ոչ մի քաղաքական յանցաւոր չը կայ։ Թիւրքերի շրջանում ամեն տեսակ ոճիրներ կան խառը, այնպէս որ դժուար է ասել թէ որ ճիւղն է աւելի զարգացած. մի բան որ աչքի է զարնում, դա՝ տղաների բռնաբարման ախտն է՝ որ տարածուած է միմիայն նրանց մէջ, այն էլ՝ քաղաքներում։ Քիւրդերը յայտնի են աշիրէթական կռիւների և աւազակութեան ճիւղերում, իսկ չէրքէզները միայն աւազակութեան մէջ։

Թիւրքիայում եղած ընդհանուր բանտարկեալների թւի մասին մօտաւոր գաղափար կազմելու համար (ճիշտ ստատիստիկ թերևս Պօլսի կառավարութիւնն իսկ չ'ունենայ), մենք կը վերցնենք մի վիլայէթի բանտարկեալների վիճակագրութիւնը, որ ժողովել ենք տեղն ու տեղը։ Դա Հալէպի վիլայէթն է, որը համեմատած Թիւրքիայի այլ մասերի—հայկական, արաբական, մակեդոնական վիլայէթների հետ—շատ աւելի անդորր վիճակ ունի։ Հետևաբար եթէ մենք բոլոր վիլայէթներում բանտարկեալների նոյն թիւն ընդունենք, ինչ որ Հալէպի վիլայէթումն է, դա ոչ միայն չի լինի չափազանցրած, այլ ընդհակառակը՝ իսկականից էլ պակաս կը լինի։

Բանտարկեալների թիւն է՝ Հալէպ քաղաքում՝ 1055, Մարաշի սանջակում՝ իր զաղաներով միասին՝ 240, Ուրֆայի սանջակում՝ իր զաղաներով միասին՝ 264։ Հալէպին անմիջական կերպով ենթարկուող զաղաներում—Այնթապ՝ 95, Անտիոք՝ 86, Քիլիս՝ 63, Ալէքսանդրէտ՝ 45, Նիզիբ՝ 25, Բէ,ջան՝ 23, Իզլիբ՝ 21, Հարէմ՝ 15, Ջօբուլ՝ 12, Ռահա՝ 8։ Ընդամենը՝ 1952։ Սրա վրայ պէտք է աւելացնել մանր կռիւների ու տուրքեր չը վճարելու պատճառով ամենօրեայ ձերբակալուածների թիւը, որ այդ վիլայէ-

թում մօտ 200-ի է հասնում։ Գումարը՝ 2152։

Մենք հաշուի մէջ չենք առնում այն բազմաթիւ խեղճ ու կրակ պանդուխտները, որոնց, որպէս թէզբէրէ չունեցողների՝ կառավարութիւնը ժողովում է ոստիկանատներում և ապա նրանցից աքսորեալների կարաւաններ կազմելով՝ քշում է դէպի իրենց հայրենիքը։ Բազմաթիւ բանտերում քաշ գալով՝ այդ քաղցածների խմբերը երբեմն շաբաթներով ու ամիսներով ստիպուած են քայլել ու յաճախ հիւանդ, ուժասպառ, մահուան դուռը հասած միայն՝ իրենց օջախն ընկնել։

Այդ հաշուով Թիւրքիայի 28 վիլայէթներում պիտի լինին մօտաւորապէս 60000 կալանաւոր։ Բացի 28 վիլայէթներից Թիւրքիայում կան նաև 7 սանջակներ (Էլվիէի Մուստագիլէ), որոնք չեն ենթարկուում որևէ վիլայէթի, այլ կապուած են ուղղակի Կ. Պօլսի հետ, և որոնցից իւրաքանչիւրում միջին թւով 450 բանտարկեալ կայ, որ անում է 3150։ Թիւրքիայում կան 8 զաղաներ (բերդ), ուր բոլոր աքսորուածների թիւը 3000-ից աւելի է։ Այս երկու թւերն էլ առնելով վիլայէթներում գտնուող բանտարկեալների թւի հետ՝ Թիւրքիայում եղած բանտարկեալների ընդհանուր գումարը կազմում է մօտ՝ 66000։

Այդ թիւը, գուցէ խոշոր ինքն ըստ ինքեան, համեմատաբար աննշան, եթէ ի նկատի ունենանք, որ օսմանեան պետութեան մէջ, ուր կայ 22 միլիոն ժողովուրդ, կատարւում են աւելի ոճիրներ, քան աշխարհիս որևէ անկիւնում։ Այդ քչութիւնը բացատրել կարող է միմիայն այն հանգամանքով, որ սուլթանների երկրի մէջ յանցանքի մի շատ աննշան տոկոսն է ենթարկւում պատասխանատուութեան և պատժի։ Թիւրք պաշտօնեաները լինելով քաղաքական „ոճրագործ“ պայմանների զաւակներ, նոյնպիսի անտարբեր վերաբերմունք են ցոյց տալիս դէպի ամեն մի կործանող արարք, որպիսին ցոյց է տալիս ինքը՝ Թիւրք ամբողջ բէժիմը և կոյր ամբոխը։ Ամենաբարձր Թիւրք պաշտօնեայի մէջ երբէք չէք տեսնի զղջանք, զայրոյթ դէպի մի ոճիր, որ քաղաքակրթած հասարակութեան մէջ ընդհանուր ցասում է առաջ բերում։ Կործանելը, աւերելը, ոչնչացնելը միս ու արեան է փոխուել Թիւրքի մէջ և տարօրինակ չէ, որ պաշտօնեան փոխանակ պատժելու ոճրագործին, նրան ազատում է կամ այն պատճառով, որ նա Թիւրք է և կամ

այն պատճառով, որ նա վնասում է տուած „գեաուրին“, առանց մտածելու և հասկանալու, թէ այդ վնասը ընդհանուր հայրենիքինն է։ Հայրենիքի և արդարութեան գաղափարն այնքան ազատ, այնքան խաւար է թիւրք ամբոխի, հոգևորականի, պաշտօնեայի մէջ, որ նա չի կարող հասկանալ, թէ մի և նոյն հայրենիքում կարող են լինել և մահմեդականներ և քրիստոնեաներ, և որ արդարութեան տեսակէտը պիտի լինի հաւասար բոլորի համար—առանց խտրութեան կրօնի և ազգի։

Եւ շրջում են ոճրագործները ազատ, անվախ երկրի մի ծայրից մինչև միւսը, իբրև լայնատարած ո ր ս տ ա ե զ ի իրենց աւերիչ յարձակումների համար։ Քաղաքակիրթ հակումներով տարուած տարրերը արիւնաքամ են լինում։ Աշխատաւոր ժողովուրդը գոսանում է։ Երկիրը դատարկուում է։ Արեան հոտը տարածուում է ամեն կողմ և հասնում կ. Պոլիս՝ մինչև „իսկական“ թիւրքերի քիթը, մինչև Համիդի ապա տանը և այնտեղ, ստրկացնող պալատի մէջ, ամենքը յափշտակուած այդ հոտով՝ փառաբանում են Ալլահին, որ վերջապէս „գեաուրները“ թողնում են իրենց երկիրը։ Անարգ, մահաբեր ռէժիմի ներկայացուցիչները կուրացած՝ չեն տեսնում ամբողջ երկրի քայքայիլը, ուժասպառ լինելը, չեն նախատեսնում այն վիթխարի ցնցումը, որի ստեղծած աւերակների տակ պիտի թաղուին իրենք, հէնց այդ մ ա շ ա լ լ ա հ գոռացողները։

Տնքում է ամբողջ երկիրը ոճիրների ցաւից, ժահրակալ վէրքերից, անքում է այն անօրինակ ճնշումից, որի աղբիւրն ու խթանը բռնակալութեան կետրօնն է, սուլթանների արիւնոտ ապարանքը, Բոսֆորի այդ եզակի բ ռ ն ա տ ո ւ ն ը, ուր փառաբանւում է ո ճ ի ր ի ատուածը։

Եւ բողոքները՝ ազատութեան ու վերածնութեան մշակները հալածական, սրով ու հրով պատած՝ գնում են դէպի բանտերը—բռն. կալութեան գոյութիւնը փաստաբանող այդ ժամանակաւոր ու անարգ կոթողները,—ուր մահացնող ռէժիմը երագում է շղթայել մ ի տ ք ն ո ւ բ ո ղ ո ք ը, յ ո յ ս ն ո ւ ի դ է ա լ ը։

Ո՞ւնայն, անմի՞տ յոյսեր։ Բանտը չէ, որ պիտի կանգնեցնէ սկսուած կործանումը,—նախանշանը գալիք մեծ վ ե ր ա ծ ն ո ւ թ է ա ն։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ZUUՊ-Арм. ССР
Ա. ԱՄ. Ա. Мясниксяна
ՍՍՍՌ-ԻԿՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ

3р

ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Քր. ա.
1.	**Ապստամբական ոգի** (սպառուած)	.10
2.	**Յեղափոխական կեանքից** (սպառ.)	.05
3.	**Դաղտնի տպարան** (սպառ.).	.05
4.	**Դիտական սոցիալիզմ. Ֆ. ԷՆԳԵԼՍ** (սպառ.)	.40
5.	**Հայ Յեղ. Դաշնակցութեան ծրագիր.** (Դ. տպագր.) .	—
6.	**Կուկունեան խմբի արշաւանքը.** (սպառ.)	.20
7.	**Կարնոյ յիշատակին** (*Զորս հատած*) „	.50
8.	**Հ. Յ. Դ. երկրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը**	—
9.	**Մարիջներ,** Homo homini lupus, ՎԱՅՊԵԼՍ (սպառ.) .	.20
10.	**Եշիտաարդեներին. Պ. ԿՐԱՊՈՏԿԻՆ.** (սպառ.)	.20
11.	**Ազատութեան նահատակներին. Ղ.ԱՐԻՔ. Ա.** (սպառ.) .	.30
12.	„ „ „ **Բ.** „ .	.60
13.	**Սմբոնայի տրամաբանութիւն. ԷԼԼԷՆԻ.** (սպառ.) .	.50
14.	**Ազատութեան նահատակներին. Ղ.ԱՐԻՔ. Գ.** „ .	.30
15.	**Հայաստան եւ Մակեդոնիա.**	.50
16.	**Տովկասեան վէրքեր. Է. ԱԿՆՈՒՆԻ.** (սպառուած) . .	3.—
17.	**Հայրենիքի զաղափարը. Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ** (սպառ.) .	1.—
18.	**Նազմակերպական կանոններ.** (Բ. տպագր.)	--
19.	**Դէպի կռիւ. Է. ԱԿՆՈՒՆԻ.**	2.—
	(Կովկաս՝ 1 ռուբլի, Ամերիկա՝ 1/2 դոլար).	
20.	**Յեղափոխականներ. Ս. ՆԻՐՎԱՆԵԱՆ** (սպառ.) . .	.20
21.	**Նախագիծ Տովկասեան գործունէութեան.** (Բ. տպ.)	—
22.	Полвина царизма. В. Араратскій.	.50
23.	**Les tueries de Bakou,** A. ARAZI	.20
24.	**Յեղափոխական դաշն.**	.20
25.	**Հ. Յ. Դ. երրորդ ընդհ. ժողովի տեղեկագրութիւնը.**	—
26.	**Նոյ Մահմէտականներին** (թուրքերէն)	.10
27.	**Les Plaies du Caucase,** E. AKNOUNI . .	2.—
28.	**Ազատութեան նահատակներին. Ղ.ԱՐԻՔ. Դ.** գրոյկ. .	.40
29.	**Մեծ մարդասպանի դէմ** (Դատաւարութիւն)	.50
30.	**Վիտշի բազէն. ՎՏԱՐԱՆԴԻ.**	.50
31.	**Յեղափոխականի մտքերը. ԲՐ. ՄԵՔԱՅԷԼԵԱՆ** . .	1.—
32.	**Հայորդիներ. ՍԻԱՄԱՆԹՕ.**	.50
33.	**Սասուն-Մուշի կռիւները**	.50
34.	**Հայկական տանջանքները եւ Եւրոպան. ԲԵՐՆՇՏԱՅՆ**	.50
35.	**Մարտական հրահանգներ. ԱՆԴՐԱՆԻԿ.**	1.—
36.	**Միացէ՛ք,** կոչ Թիւրքիայի բոլոր ազգերին (թուրքերէն) .	.10
37.	**Թիւրքական բանտերը. ՄԱՐ.**	.25
38.	**Պարտականութիւններ Ռուսաստանում** (Մամլոյ տակ)	

ՀՀ Ազգային գրադարան
NL0207935

37.091